



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

21 հուլիսի Ամսիոյի Ուղղափառ Եկեղեցու միջոցառում



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամսիոյի Ուղղափառ Եկեղեցու Չախլի միտրոպոլիտ Աստուխ Աստուխ՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան Մաքարոսի եւ բարերար Նիկոլա Աբոֆայիսյանի:

Նորին Սրբությանը փոխանցելով Ամսիոյի Ուղղափառ Եկեղեցու պետ Հովհաննես Ժ-ի եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները՝ Չախլի միտրոպոլիտն իր ուրախությունը հայտնեց՝ առաջինը պետականորեն քրիստոնեությունն ընդունած օրինակ երկիր այցելության առնչությամբ: Նա նաեւ փաստեց երկու Եկեղեցիների միջեկեղեցական սերտ կապերն ու պատմական աղերսները: Խոսքի ավարտին միտրոպոլիտը խնդրեց Նորին Սրբության գորակցությունը՝ Ուղղափառ Եկեղեցու բարերար մի զավակի կողմից Հայաստանում կառուցվելիք մատուռան հարցում: Այս առիթով Նորին Սրբությունը մատրան կառուցման ազնիվ նախաձեռնության համար հայրապետական իր գնահատանքը հայտնեց բարերարին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բերելով իր օրհնությունը, վերստին հայտնեց իր եղբայրական սերն ու ջերմ զգացումները Ամսիոյի Ուղղափառ Եկեղեցու պետի հանդեպ, ինչպես նաեւ երախտագետ սրտով վերհիշեց Լիբանանի եւ Արաբական պետությունների այն հոգածու վերաբերմունքը, որ ցուցաբերել են հայ ժողովրդի նկատմամբ՝ հնարավորություն ընձեռելով Մեծ եղեռնից մազապուրծ հայերին վերակառուցելու իրենց ազգային-հոգեւոր կյանքը:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը:

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների ղալափ անդամ
Զիմ Կոստային

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ Զիմ Կոստային՝ ուղեկցությամբ Ֆրեզլոյում Հայաստանի Հանրապետության պատվո հյուպատոս Պերն Աբգարյանի:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը հայ ժողովրդի նկատմամբ տածած հարգանքի եւ կատարած հայանկատս գործունեության համար իր մասնավոր գնահատանքն ու հայրապետական օրհնությունը փոխանցեց տիար Զ. Կոստային: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց վերջինիս կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու Արցախի ժողովրդի արդար իրավունքների պաշտպանությանն ի նպաստ գործադրված ջանքերը:

Նորին Սրբությունը կարեւոր նկատեց նաեւ այդ գործում Կոնգրեսի մյուս անդամների կողմից բերված գորակցությունը եւ աղոթքով մաղթեց, որ երկնավոր Տերն արդյունավորի նրանց ազնիվ ջանքերը:

Իր հերթին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամը Նորին Սրբությանը ընդգծեց, որ հայությունը եւ ԱՄՆ հայ համայնքի խնդիրները եղել են իր հետաքրքրության շրջանակներում, եւ պատրաստակամ է աջակցելու Հայոց ցեղասպանության ճանաչման գործին:

նկատմամբ իրականացված ոճրագործություններին ճիշտ գնահատական տալը՝ արդար եւ խաղաղ աշխարհի կերտելու համար, ինչպես նաեւ վերջին օրերին երեւանում ծավալված իրադարձությունների կապակցությամբ ընդգծեց առկա իրավիճակը բացառապես խաղաղ ճանապարհով հանգուցալուծման առաջնորդելու անհրաժեշտությունը:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը:



28 հուլիսի ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ արեւելյան հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու հոգեւոր հովիվ Կոմիտաս քին. Չոհրաբեյանի:

Ուխտավորներին ներկայացնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ տեր Կոմիտասը խոսեց հայրենիքից ստացած նրանց տպավորությունների մասին եւ հայցեց Նորին Սրբության օրհնությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով ուխտավորների այցը հայրենիք, իր մասնատախանայնեց նաեւ հայապահպանման պատասխանատու գործը:

Նորին Սրբությունը փաստեց, որ դեպի հայրենիք ուխտագնացությունները հնարավորություն են ընձեռում, որպէսզի հայրորդիները հասակ առնեն որպէս հայրենիքի ու նախնայաց արժանավոր զավակներ եւ հետևորդներ՝ իրենց հայրերի ստեղծած հարուստ ժառանգության:

Չրույցի ընթացքում անդրադարձ եղավ կրթության ոլորտում Հայ Եկեղեցու իրականացրած առաքելությանը: Հայոց Հովակայետը պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին:



վոր գնահատանքը փոխանցեց տեր Կոմիտասին, ում նախաձեռնությամբ հայորդիներն ուխտավորաբար ժամանել էին Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Անդրադառնալով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հոգեփրկչական առաքելությանը՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հավելեց, որ Հայ Եկեղեցին դարձրել է շարունակ թե՛ հայրենիքում, թե՛ Ափյուռքում տախանայնեց նաեւ ուխտավորների հարցերին:

Վերջում իր հայրապետական օրհնությունը բերելով ուխտավորներին՝ Նորին Սրբությունն աղոթեց, որ երկնավոր Տիրոջ քաղցր հայացքի ներքո նրանք շարունակեն ապրել՝ նույն նախանձախնդրությամբ փարված մասնավոր Հայ Եկեղեցուն ու ազգային կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ
ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Ֆրանսիայի նախագահին

Հուլիսի 15-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆրանսուա Օլանդին՝ նախորդ գիշեր Նիս քաղաքում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ:

«Խստորեն դատապարտում ենք մարդկային կյանքի դեմ ուղղված այդօրինակ անմարդկային ոճրագործությունը եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առկա Մեր գորակցությունն ու վշտակցությունն ենք հայտնում Ձեզ, զոհվածների ընտանիքներին ու հարազատներին եւ Ֆրանսիայի բարեկամ ժողովրդին», - ասված է Նորին Սրբության ցավակցագրում:

Աղոթք բարձրացնելով անմեղ զոհերի հոգիների հանգստության համար՝ Նորին Սրբությունը հայցել է Բարձրալն Աստուծոց մխիթարություն պարգեւել մահացածների հարազատներին, իսկ ահաբեկչությունից տուժածներին՝ շուտափույթ առողջություն:

1. ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՌՈՂՈՐԴԱԿԱՆ ԺԱՌՆԱԳՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Բազմազան է Հոփի. Շիրազի բանաստեղծական ժառանգության ժանրային կազմը. փոքրածավալ երկտող մանրակերտ երկերից սկսած՝ մինչև ազգային ժողովրդական ոճավորումով խաղիկներ ու քառյակներ, բազմաձև քերթվածներ՝ եվրոպական տոնետներ, բալլադներ, արեւելյան աշուղական տաղաչափական ձևեր՝ բեյթ, դազել, դիվանի, դուբայթ, մուխամմազ, դոշմա, սեմայի, առակներ, բանաստեղծությամբ հյուսված պոեմներ, մինչև 10-12 հազար տող կազմող մի քանի մեծածավալ պատմափիլիսոփայական պոեմներ եւ այլն:

Շիրազյան բազմաբովանդակ ու հարուստ ժառանգության մի պատկառելի մասն են կազմում նաեւ տարաթեմա մի քանի հարյուր քառյակները, որոնք ստեղծվել են նրա գրական ուղու տարբեր շրջափուլերում եւ գերազանցապես վերջին տասնամյակներում՝ 1950-1980-ական թթ.:

Շիրազյան քառյակների աշխարհի մասին ամբողջական պատկերացում կարող է տալ մի փոքրիկ վիճակագրական հաշվարկ: Քառյակների առաջին նմուշները հայտնի են դեռեւս 1934 թվականից: Շուրջ երկու տասնյակ քառյակ արդեն կար 1940 թ. լույս տեսած «Երգ Հայաստանի» գրքի «Աշըղ Շիրազ» բաժնում: «Քնար Հայաստանի» առաջին գիրքն (1958) ուներ թեմատիկ բաժանմամբ չառանձնացված խառը քառյակների մի ծավալուն բաժին՝ թվով 74 կամ հինգով ավելի, քան Հոփի. Թումանյանի քառյակների ամբողջ քանակությունն է: Ավելի ուշ՝ 1977 թ., պրոֆ. Մ. Մազմանյանի առաջաբանով լույս տեսավ նրա 542 քառյակ պարունակող մի ամբողջ գիրք՝ «Յոթնապատում» խորագրով, ուր քառյակներն ըստ թեմաների ներկայացված են յոթ բաժնում: Չուտ քանակական առումով այն արդեն մոտ ութ անգամ գերազանցում էր թումանյանական քառյակագրությանը: Իսկ 1981-1984 թթ. լույս տեսած քառափառի առաջին գրքի «Քառյակ-



ներ» բաժնի ութ ենթաբաժնում ընդգրկված են դրանցից 462-ը: Նշանակում է՝ շուրջ 80 քառյակ, այսինքն՝ այնքան, որքան արժանական բայաթի-քառյակներն են, հեղինակն ինքը տարբեր նկատառումներով չի ներառել նշված հատորում:

Այս ամենը հաստատում են այն իրողությունը, որ հարյուրավոր ժողովրդական խաղիկներն ու շուրջ կես հազարյակի հասնող հայրենները չհաշված՝ Հոփի. Շիրազը ամենից բեղմնավորն է հայ քառյակագիրների մեջ, եւ նրա այդ ժանրի գործերը, միասին վերցրած, քանակով գերազանցում են հայ բոլոր քառյակագիրների համաբնույթ ամբողջ ժառանգությանը: Սակայն, ինչպես Թումանյանն է ասել, «... գրականությունը քանակով չի գրականություն, այլ որակով, եւ գրողը նրանով չի նշանավոր, թե ինչքան է գրում, այլ թե ինչ քան է գրում» (Թումանյան Հ., Մտքեր, «Արեւելք-Արեւմուտք» մատենա-

շար, Հոփի. Թումանյանի թանգարան, Եր., 2011, էջ 294):

Մենք, իհարկե, միայն քանակական տվյալներ արձանագրեցինք եւ հեղինակներին միմյանց հակադրելու մտքից հեռու ենք, իսկ համեմատությունը, քնականաբար, անխուսափելի է, որովհետեւ միայն զուգահեռ դիտարկմամբ է հնարավոր ճշգրտել հայ քառյակագրության զարգացման իրական պատկերը: Եվ միայն դա՝ հնարավոր կդարձնի քննարկվող ժանրաձևով ստեղծված գեղարվեստական արժեքների ընդհանուր համապատկերում շիրազյան քառյակների անկողմնակալ գնահատությունը:

Իսկ այս նպատակադրման իրագործումը զուտ ընդհանուր բնորոշումներով կամ հայտարարություններով չի իրականանա. դրա համար անհրաժեշտ կլինի շիրազյան քառյակների գիտատեսական խորքային ուսումնասիրություն հայկական ժողովրդական խաղիկների, քուչա-

կյան քառատող հայրենների, պարսկական գրականության վերոհիշյալ դասականների հետ ունեցած առնչությունների եւ Հոփի. Շիրազին նախորդած ու հաջորդած հայ հեղինակների եւ մանավանդ Հոփի. Թումանյանի ու Ե. Չարենցի հետ գրական ազգակցության համապատկերում:

Նահապետ Քուչակի անձնավորությունից բացի՝ տարակարծություններ են եղել քուչակյան հայրենների ժանրատեսակի շուրջ. ոմանք դրանք քառյակ են համարել, ոմանք՝ ոչ: Հայոց լեզվի տաղաչափության հմուտ հետազոտող, մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը, օրինակ, ոչ առանց հիմքի՝ ճիշտ չի համարել «Հայերգ» ժողովածուում Ա. Տեկանցի, ապա եւ նրա հետեւորդների կողմից հայրենները որպես քառյակ հրատարակելը, ուրեմն եւ՝ հայրենները քառյակ համարելը կամ անվանելը: Դրա համար նա, անշուշտ, ուներ տրամաբանական հիմնավորումներ. «Տեկանցը «Հայերգի» մեջ,- գրել է նա,- պատահմամբ հայրենները տպագրել է 15-վանկանի երկայն տողերով, եւ այդպիսով այդ տաղերը մեծ մասամբ քառյակներ են դուրս եկել: Նրան հետեւելով՝ նույնպես վարվել է եւ Չոպանյանը, որ համարում է դրանք երկայն տողերից կազմված քառյակներ, փոքր մասով եւ հնգյակներ, վեցյակներ: Այնուհետեւ ուրիշներն էլ, Չոպանյանին հետեւելով, այդ երգերը երկայն տողերով քառյակներ են ընդունում: Բայց դա ճիշտ չէ... Մեր հայրենների մի մասը ոչ թե երկայն տողերով քառյակներ են, այլ կարճ տողերով եւ քեթերով կազմված դազելներ» (Կեֆեդյան Մ., Երկեր, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. Բ., Եր., 1967, էջ 28-30):

Շարունակությունը՝ էջ 4



Աստված նրան օժտել էր բացառիկ տաղանդով, հախուռն բնավորությամբ, անսահման հումորով եւ ընդհանրապես այն բոլոր բարեմասնություններով, որոնք միջին թվաբանական քաղաքացուն կարող էին խելթություն անվիճելի նախանշաններ թվալ: Միանգամայն նույնն էր նաեւ մերձավորների համոզմունքը. «Իմ ընտանիքն ինձ միշտ վերաբերվել է իբրեւ փոքրիկ խելագարի, եւ գրամեքենայով իմ հրապուրվելն առավել մեծացրեց խելագարի իմ այս համբավը»: Վաղ այրիացած, չորս երեխայի խնամքի հոգսն իր ուսերին կրող մայրն ըմբռնող, ներողամիտ էր կրտսեր որդու հանդեպ. խենթ լինելը փոքրիկի բացառիկ մենաշնորհն էր:

Ինը կամ տասը տարեկան էր, որ «հայտնաբերեց» Դիքենսին, տասներեք էր, երբ որոշեց գիրք գրել... տասն օրում՝ համոզված, թե ավարտուն աշխատանքը կփոխի աշխարհը... Առաջին

պատմվածքը լույս տեսավ, երբ քսանհինգ տարեկան էր: Ընթերցվող ու հեղինակություն վայելող պարբերականի էջերում հայտնվելը նրան անմիջապես ճանաչում բերեց, դարձավ փնտրված, իսկ հայտնի գրաքննադատը շտապեց բառի նկատմամբ ուշադրությունն անվանել «սարոյանական»: Հետո «սարոյանականը» պետք է դառնար բարու, պարզ ու շիտակի, անխորտակելի լավատեսի, պարզունակի, գրեթե մանկամտի, խոհուն ու խորունկ փիլիսոփայի խորհրդանիշ-բնութագիր. սարոյանական ժպիտ, սարոյանական թախիծ, սարոյանական... անշփոթելի ձեռագիր, ոճ. «Ճիշտ է՝ ես անփույթ եմ գրում, բայց ճշմարտությունն այն է, որ իմ գրվածքներում կա մի ինչ-որ լավ բան, որ իմն է միայն, եւ որը ուրիշ ոչ մի գրողի երբեւէ չի կարող տրվել»: Հավատացած էր, որ գրելը հնարավորություն է տալու տեղը լինելու իր փոքր, աննշան մարմ-

Վիլյամ Սարոյան. «Իմ գրվածքներում ինչ-որ լավ բան կա, որ իմն է միայն»

նի ու նաեւ բնակիչը՝ անեզր, անընդգրկելի, անիմաստի տիեզերքի: Իր համար նախասահմանված ժամանակից հետո հավերժ ապրելու հուսալի հնարավորություն-երաշխիք է գրելու շնորհքը: Սակայն, ո՞ր միջավայրը խթանեց օտարության մեջ ծնված, երեք տարեկանում որբացած մանչուկի ստեղծագործ ջիւղը: Ֆրեզկոյի հայ համաձայնը: Բայց նրանք՝ իր ազգակիցները, մի կերպ կրում էին իրենց խաչը, փորձում էին բանաստեղծություններ գրել ու կատարյալ ձախողակներ էին. «Ես մտադիր չէի ձեռնարկել մի գործի, որտեղ ձախողվելն անխուսափելի էր թվում»: Տապալված էին նաեւ Ֆրեզկոյում ապրող խալապիների, ռուսների, սլավոնների, ասորիների, դանիացիների, անգամ հենց իրենց՝ ամերիկացիների գրելու ճիգերը. «Բոլորն զբաղված էին գաղափարներից հեռու փախչելով»:

Որբանոցը սրեց գրողի զգացողությունները: Անշուշտ, այստեղ երեխաները կուշտ էին, խնամված: Ընդամենը... կուշտ էին ու խնամված: Եմերտնի դպրոցը: Դպրոց: Սարոյանն իր պատմվածքներում հաճախ է կսմիթներով խոսում հանրակրթության մասին. «Ամենից ավելի շատ ինձ զայրացնում էր դպրոցը, բայց սովորելը՝ երբեք: Դպրոցին զայրույթով վերաբերվելու իրական պատճառն ուսուցման համակարգն էր, որը հիմար էր ու անիմաստ եւ ահավոր չափով

ինձ հունից հանում էր: Ուսուցման այդ համակարգն ստեղծված էր բացառապես տկարամիտների համար, ովքեր ցանկություն չունեին սովորելու...»: Ուսուցիչները կաղապարված էին, թերուս, անվարժ ու անկարող էին պատասխանելու երեխաների անսպասելի հարցերին: «Իմ հակառակորդը հանրային կրթական համակարգն էր»:

Եվ Սարոյանը գտնում է իր մեծագույն ուսուցիչն՝ փողոցը: Փողոց, որ «կերտել» է նրան, փողոցում է ծնվել մարմնապես ու հոգեպես: Նրա տունը ողջ աշխարհն էր, եւ երջանիկ էր, որ ինեց այնտեղ է գտնվում: «Ինձնից հավելյալ ժամանակ պահանջվեց բացահայտելու համար, որ ես գործ եմ ունենալու Բառի հետ» խոսքն արգասավոր, ճշգրիտ, հեռահար ու խորիմաստ գործածելու հետ... Մարդը պետք է աշխատի, պետք է անդադար ստեղծի, նորից ու կրկին եւ իր ճիգ ու ջանքով պետք է կատարելագործի իր ստեղծածն ու ստեղծելու կերպը»,- Սարոյանը, հավանաբար, հաջողության իր բաղադրատոմսն է փոխանցում եւ կողներին:

ՀԳՄ հրատարակչությունը լույս է ընծայել Վիլյամ Սարոյանի «Հեծանվորդը Բեւերլի հիլզից» վիպակը, բնագրից թարգմանությունն իրականացրել է բանասիրության թեկնածու, Գոգոլի անվան հիմնական դպրոցի տնօրեն Ասատուր Սարյանը: Սա թարգմանչի՝ հայ ընթերցողին Սարոյա-

նի անհայտ էջերը «հայտնագործելու» հնարավորություն տալու երրորդ հաջող փորձն է՝ «Մարդկության տունը» եւ «Ձեռնամարտ ի սեր Հայաստանի» ժողովածուներից հետո: «Այս գիրքն ամեն դեպքում չունի սկիզբ ու չունի վերջ»,- նկատում է Սարոյանը, որի հետ ընթերցողի գրույցը նման է մտերիմների անշտապ, հանդարտ վայելքի: Մտերիմների գրույց, երբ չես էլ հասցնում նկատել, թե ինչպես ես անցնում մի պատումից մյուսին, առաջին հայացքից երբեմն կապ չունեցող իրադարձությունների, թեմաների շղթան պարունակում է ընթերցողին բարության, հանդուրժողականության ու սիրո տրամադրությամբ, քանզի սիրելը եղել է եւ կա Սարոյանի էությունը: Եվ սիրով լեցուն է հիշողությունը, որովհետեւ մարդն ինքը հենց իր հիշողությունն է:

«Ո՛չ սերը, ո՛չ ատելությունը եւ ո՛չ էլ մարդկության փորձի ու փորձառության մեջ անձնապես ներգրավված լինելու որեւէ այլ կարգի մղումը չեն կարող այնքան լավ ծառայել մարդկային հոգուն, որքան այս ազատությունը եւ բարի լինելու անհրաժեշտությունը»,- հրաժեշտից առաջ համոզմունքով պնդում է Սարոյանը, իսկ ընթերցողն էլ ուզում է հավատացած լինել, որ հաջորդ հանդիպումը շատ չի ուշանա...

ԱՍԻ ԽՈՐՀԱԿԵՐԴՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Սկիզբը՝ թիվ 11, 13

Ընդհանուր կերպով խոսելով պատմաոգի ժանրային առանձնահատկությունների մասին՝ անդրադառնանք միջնադարյան գրականության պատմահայրենասիրական ողբերից մի քանիսին՝ հատկապես Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու, Խաչատուր Կեղանցու եւ Ստեփանոս Օրբելյանի երկերին:

Բ

Հայ բովանդակ մատենագրության մեջ պատմահայր Մովսես Խորենացին իր ստեղծագործության համամարդկային եւ ազգային նշանակությամբ բացառիկ տեղ է գրավում: Մինչ Խորենացին հայ պատմագրությունը որոշակի հաջողությունների էր հասել: Կային Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Նաե՛ւ՝ Եղիշեն, կար Կորյունի «Վարքը»: Սակայն հարկ է նշել, որ այս բոլոր գրքերը հայոց ամբողջական պատմությունը չէին: Սրանցից յուրաքանչյուրն ամփոփում էր պատմական հատվածական մի ժամանակաշրջանի նկարագրություն: Խորենացու «Հայոց պատմությունը» դարձավ այն մատյանը, որի մեջ սերունդները տեսան իրենց նախնյաց ամբողջ պատմությունը՝ անհիշելի ժամանակներից մինչեւ Արշակունյաց հարստության վախճանը: Խորենացին այն համապարփակ մտածողն էր, գիտնականը, որը կարողացավ վերականգնել հիշողությունը հայ ցեղի անցած ժամանակների մասին: Պատմիչը հարցը դնում է այսպես. արժե՞ գրել մի ժողովրդի անցյալի մասին, որը նոր ժամանակներում դարձել է անդեմ ու հպարտալի՞ զուրկ սեփական պետականությունից, չե՞ որ պետություն կերտում են այն ժողովուրդները, որոնք համաշխարհային քաղաքականության մեջ ունեն իրենց ներդրումը, քաղաքական-պատմական հարաբերություններում կշիռ են ունեցել եւ վճռական դեր կատարել: Եվ Խորենացին հպարտությամբ ցրում է անցյալի մշուշը եւ վեր հանում այն ուղեծիրը, որը հայ ժողովրդին է, նրա պատմության վկայությունը: Իզուր չէ, որ հայ գրականության խորիմաց ուսումնասիրողներից մեկը՝ Հրանտ Թամրազյանը, նկատել է. «Իս-

Հայրենասիրական ողբը

կապես ասած, Խորենացու մեջ կա ինչ-որ արտակարգ, զարմացնող ու կախարհող մի բան, որի առաջ նսեմանում են մի շարք ուրիշ խիստ կարմեւոր հատկանիշներ: Խորենացին հետագա բոլոր սերունդներին մոտ հեղինակ է: Ըստ Երեւոյթին դա պետք է բացատրել խորաթափանց մտքով ու բացառիկ ներքնատեսությամբ, որոնք օգնել են նրան իր պատմության մեջ՝ դարերի փորձի վրա ստեղծել հայ ժողովրդի պատմական բախտի փիլիսոփայությունը եւ կռահումներ անել ոչ միայն անցյալի, այլ նաեւ գալիքի մասին: Պատահական չէր, որ անգամ 30-ական թվականներին «Գիրք ճանապարհի» մեր խորագույն բանաստեղծը դիմում էր Խորենացու օգնությանը («Պատմության քառուղիներով»), ավելին, հյուսում անավարտ մնացած պոեմը՝ տառապած ծերունի պատմիչի մասին:

Խորենացին ունի ինչ-որ խիստ էական բան՝ պահված Նաեւ գալիքի դարերի համար: Այս հարատեւության գաղտնիքը նախ պետք է որոնել նրա անկրկնելի ծիրքի, կյանքն ու պատմությունը վերլուծելու մեծ կարողության, տրամաբանական ուժի եւ բազմակողմանի զարգացման մեջ: Այս ամենի գումարը մի մարդու մեջ՝ չափազանց նպաստավոր եղավ, որ նա դառնա հենց այն մարդը, որը հատկապես հարկավոր էր 5-րդ դարի հայ հասարակական մտքին ու կյանքին» (Հրանտ Թամրազյան, Հայ քննադատություն, Ա գիրք, Եր., 1985, էջ 95-96):

«Պատմության» առաջին գրքի 3-րդ գլխում, որը վերնագրված է «Մեր առաջին թագավորների եւ իշխանների անխմաստսեր բարքի մասին», Խորենացին արդարացիորեն քննադատում է հայոց թագավորներին եւ իշխաններին, որոնք չեն մտածել գրել տալու հայ ժողովրդի ամբողջական պատմությունը: Պատմիչը նրանց համարում է անխմաստսեր մարդիկ, որոնք հակում չեն ունեցել դեպի գիտությունները, իմաստուն երգարաններն ու

վեպերը: Այդ հիմքի վրա էլ նա գովաբանում է Սահակ Բագրատունի իշխանին, որը մտահղացել է գրել տալ ազգի պատմությունը: Խորենացին առիթը բաց չի թողնում ամեն անգամ դրվատանքի խոսքեր ասելու նրա մասին. «Բայց ես շատ եմ զարմանում քո մտքի բեղմնավորության վրա, որ մեր ցեղերի հներից սկսած մինչեւ այժմյանները միայն դու գտնվեցիր այսպիսի մեծ գործի ձեռնարկող եւ մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել՝ երկար եւ շահավոր գործով ճշտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների եւ նախարարական ցեղերի եւ տոհմերի մասին, թե ո՛վ ումի՞ց է ծագել, ի՞նչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, եւ ո՛րը այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է, եւ որո՞նք եկվորներ են եւ հայացած բնիկ են դարձել, ամեն մեկի գործերն ու ժամանակները գրով են դրոշմել, անկարգ աշտարակի շինությունից սկսած մինչեւ ներկա ժամանակս - նկատելով այս բեզ համար գեղեցիկ փառք եւ բավականություն առանց նեղության» (*Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1961, էջ 82-83: Հետագա մեջբերումները նույնպես այս հրատարակությունից են*): Պատմիչն ընդգծում է մի կարեւոր միտք. հայ ժողովուրդն անցել է պատմական նշանակալից ուղի եւ չնայած թվական առումով մյուս ժողովուրդներից ավելի փոքր է, բայց կարողացել է անցած դարերի ընթացքում կատարել իր պատմական դերը: Մեր հայրենիքի պատմությունը՝ իր անցյալով ու ներկայով, նա պատկերացնում է այսպես. «Որովհետեւ թեպետ մենք փոքր ածու ենք եւ շատ անգամ օտար թագավորների կողմից նվաճված, բայց եւ այնպես մեր երկրում էլ գրելու եւ հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու» (նույն տեղում, էջ 83):

Խորենացին գտնում է, որ պատմությունը ժողովրդին սովորեցնում է քաղաքական օրենքներ, նրան տալիս է պետական



նության ըմբռնում: Այս միտքը կարեւորվում է այն առումով, որ հիսուն տարուց ավելի չէր անցել, երբ Հայաստանում գահընկեց եղավ Արշակունի վերջին թագավորը (428 թ.), եւ հայ ժողովուրդը բնականաբար չէր կարող հաշտվել պետականությունը կորցնելու փաստի հետ, մարգարանական վիճակը նրան չէր կարող բավարարել: Ահա հոգեբանական եւ քաղաքական գիտակցության մի այդպիսի իրադրության մեջ է ստեղծվել Խորենացու «Հայոց պատմությունը», որն ունեցել է որոշակի նպատակ. կազմակերպել հայ ժողովրդի միասնությունը եւ նախապատրաստել հայոց պետականության վերահաստատումը: Այս հազվագյուտ պատմության մեջ հնադարի մտածողն իր երիտասարդ ընթերցողին ներարկում է քաջարի նախնյաց ոգին՝ ցույց տալով, թե ինչպես են նրանք իրենց սրի միջոցով հաստատել իրենց ինքնությունը, աշխատանքով ու վաստակով կառուցել իրենց հայրենիքը: Մի խոսքով՝ նա անցյալի մեջ, ծագման ու հաստատման մեջ տեսնում է խորապես հայկական հերոսական մի պատմություն:

Շարունակությունը՝ էջ 5

Սուրբ Բարսեղ Եղիսկոտոսի՝ [ԵՐԿՐՈՐԴ ԾԱՌԸ]

Պահի մասին



ղած չար ոգիների հետ» (*հմմտ. Եփես. 2. 12*), այդպիսիները ժուժկալութեամբ եւ պահեղով պիտի ամրանան, որովհետեւ իւրը պարարտացնում է մարտիկին, իսկ պահքն ամրացնում է բարեպաշտութեանը՝ նուիրուողին: Ուստի որքան խլես մարմնիցդ, այնքան կնուիրես հոգուդ, որ այն փայլի հոգեւոր քաջառողջութեամբ, որովհետեւ ոչ թէ մարմնական ուժով, այլ հոգու արթնութեամբ եւ նեղութիւնների դիմանալով է կերտում յաղթանակն աներեւոյթ թշնամիների դէմ:

Բ. Պահքն ամենայն ժամանակ օգտակար է դրան ձգտողի համար, որովհետեւ պահեցողին չեն համարձակւում մերձենալ փորձութեան դէտերը, եւ մեր կենաց պահպանան հրեշտակներն աւելի անխոնջ են՝ հոգին պահեղով մաքուր պահողների կողքին: Բայց առաւել օգտակար է պահքն այժմ, երբ աշխարհով մեկ քարոզուելով՝ ազդարարւում է նրա մասին: Եւ չկայ որեւէ կղզի, ցամաք կամ քաղաք, ո՛չ ազգ եւ ո՛չ եզերք, ուր չլսուի քարոզն այս: Ե՛ւ զօրականները, ե՛ւ ուղեգնացները, ե՛ւ նաւորդները, ե՛ւ վաճառականները՝ բոլորը, հաւասարապես լսում են պատուիրանն ու ընդունում խնդրութեամբ: Ուստի որեւէ մէկն իրեն չպետք է դուրս դասի պահեցողների շարքից, ուր առկայ են մարդկանց բոլոր տե-

սակները, ցանկացած հասակի, կարգի ու աստիճանի: Ամեն եկեղեցում հրեշտակները գրառում են պահեցողների [անունները]: Եւ տե՛ս, որ կերակրի չլնին հեշտանքի համար չգրկուես հրեշտակական գրից եւ իբրեւ դասալիք՝ մեղաւորի պես յառնես զօրավարի դէմ: Աւելի փոքր է վտանգը, եթէ պարտազմ ժամանակ մեկին յանդիմանեն, թէ ասպարընկեց է (*վահանք վայր է դրել*), քան եթէ պարզուի, որ մէկը մեծ գէնքը՝ պահքն է բացընկեց թողել:

Ընչե՞ղ (*հարուստ*) ես... թշնամաբար մի՛ անարգիր պահքը՝ նրան չարժանացնելով քեզ սեղանակից լինելու: Մի՛ վտարիր նրան քո տնից՝ մնալով բարեկեցիկ հեշտասիրութեան մէջ: Թո՛ղ

պահքը երբեք չպատմի քո այդպիսի արարքի մասին եւ իբրեւ դատավճիռ՝ աւելի մեծ կարօտութեան հասցնի՝ մարմնական հիւանդութեան կամ որեւէ այլ տխուր պատճառով: Աղքա՛տ, մի՛ ծաղրիր պահքը, որովհետեւ նա վաղուց քո տնակիցն է եւ սեղանակիցը: Ըստ բնութեան՝ կանանց համար պահեցողութիւնը նոյնքան բնական է, որքան շնչելը: [Եւ] մանուկները՝ որպէս քաջագուարճ տունկեր, թո՛ղ պահքի ջրով ոռոգուես: Ծերերի համար աշխատանքը թեթեւանում է վաղուց ի վեր պահքին ընտելացած լինելու շնորհիւ, որովհետեւ զբաղմունքը, որին սովորել ես վաղուց՝ չի տրտմեցնում: Ծանապարհորդների հա-

մար օգտակար ուղեկից է պահքը, որովհետեւ եթէ ճոխութեան [ձգտումը] նրանց հարկադրում է բռնակրել վայելքի համար պիտանի բաները, ապա պահքը թեթեւ եւ քաջագօտի (*գօտեպիսղ եւ գործելու պատրաստ*) է դարձնում նրանց: Եւ եթէ սահմանից այնկողմ են հեռու է [արշաւելու] զինուորը, [ամենա]պիտանի բաներն է միայն վերցնում եւ ոչ թէ ճոխութեան պարագաները: Եւ մենք, որ մարտի ենք ելել աներեւոյթների դէմ, նրանց նկատմամբ յաղթանակից յետոյ շտապելու ենք դէպի վերին (*երկնային*) գաւառները, արդե՞ք պատշաճ չէ, որ, իբրեւ զինուորեալ, բաւարարուենք անհրաժեշտով:

Գ. «Դիմացի՛ր չարչարանքներին իբրեւ լաւ զինուոր» (*հմմտ. Բ. Տիմոթ. Բ. 3*) եւ մարտնչի՛ր օրէնքով, որ պսակի արժանանաս՝ գիտնալով, որ «ո՞վ մրցում է, ամեն ինչում ժուժկալ է լինում» (*հմմտ. Ա. Կորնթ. Թ. 25*):

Եւ պետք չէ անտեսել այն, ինչ այժմ [մտքիս] եկաւ. նրանք, որ զինուոր են աշխարհում, իրենց ջանքերին համաչափ աճում է նաեւ կերակրաբաժինը, իսկ հոգեւոր զինուորների կերակուրը որքան քիչ է, այնքան աւելի մեծ են արժանիքները: Մեր սաղաւարտը տարբեր է անցողիկից, որովհետեւ վերջինս պղնձից է կազմուած, իսկ մերը՝ յոյսից փուկութեան (*հմմտ. Ա. Թեսալ. Ե. 8*), եւ նրանց վահանք փայտից եւ կաշուից է արարուած, իսկ մերը՝ հաւատից:

Շարունակությունը՝ էջ 6

Սկզբը՝ էջ 2

Այսպես մտածելու համար մեծավաստակ հայագետը հիմք է ընդունել այն իրողությունը, որ 15 վանկանի տողերը կանոնավորապես բաժանվում են 7 եւ 8 կամ 8 եւ 7 վանկերի, որոնց միջեւ կա դադար՝ c'esure: Իսկ դրանց կիսատող կամ ամբողջական տող լինելը, ըստ Աբեղյանի, որոշվում է հանգով, որ հայրեններում նաեւ տողի ավարտ է նշանակում: Փաստորեն հայրեններում, Մ. Աբեղյանի կարծիքով, երկու տողով կազմվում է մեկ միասնություն, որ նույնանում է պարսկական դագելին, որի մեջ առաջին նույնահանգ տողերին կարող են հաջորդել ցանկացած քանակությամբ երկտող տներ կամ բեյթեր, որոնք նախորդին հարաբերում են տների երկրորդ տողերի հանգավորումով: Ավելին. Մ. Աբեղյանը սրա հետ միասին բնորոշել է նաեւ քառյակի՝ որպես ինքնուրույն բանաստեղծական տեսակի ծագումն ու կառուցվածքային յուրահատկությունները: Ղազելի՝ կից հանգավորմամբ առաջին երկտող տան կամ «արքայական տան» եւ հաջորդող առաջին տողն անհանգ տներից որեւէ մեկի միավորումով է ձեւավորված քառատող բանաստեղծությունը կամ քառյակը, որ պարսկերենում կոչվում է դուբեյթ կամ ռուբայի (տե՛ս նույն տեղում, էջ 30):

2.

Քառյակի ժանրաձեւը միջնադարի խորքերում թաքնված հին պատմություն ունի: Այն հայ քնարերգության մեջ նորություն չէր, եւ ինքնին հասկանալի է՝ պետք է գործ ունենանք շուրջ հազարամյա վաղեմություն ունեցող արեւելյան, հատկապես պարսկական ու հայկական փոխառնչվող գրականություններում եղած որոշակի գրական ավանդույթի հետ: «Քառյակը եւս, որ համարվում է բուն իրանական բանաստեղծական ձեւ,- գրել է Օմար Խայյամի քառյակները պարսկերեն բնագրից հայերենի թարգմանած բանաստեղծ Ազատ Մաթանը,- ամենայն հավանականությամբ ունի ժողովրդական ծագում: Դրա նախատիպը կարելի է համարել իրանական բանահյուսության «դոբեյթի» (դուբեյթ = երկու բեյթ - Ս. Մ.) կոչվող ձեւը, որը ձեւով եւ բովանդակությամբ համընկնում է հայկական ժողովրդական խաղիկներին:

Բանահյուսական ակունքներից է գալիս քառյակների սեղմ եւ անպաճույճ կառուցվածքը: Այն իրենից ներկայացնում է խոսքային ուժականության զարմանալի խտացում, որը հատուկ է առածին եւ ասացվածքին: Վերոհիշյալից ելնելով՝ կարելի է Օմար Խայյամին համեմատել Նահապետ Քուչակի հետ թե՛ նրան վերագրվող հայրենների ժողովրդական



ծագման եւ թե՛ նրա անձի շուրջ եղած տարածայնությունների եւ տարակուսանքների առումով» (տե՛ս **Օմար Խայյամ**, Զառյակներ, բնագրից թարգմանեց Ազատ Մաթանը, «Թահիդիաթ Նագարի» հրատ., Իրան, Սպահան, 2007, գրքի «Երկու խոսք» առաջաբանը, էջ 8-9 (լատինական էջահամարով):

Եթե միջնադարյան ժողովրդական խաղիկներն ու մանի-պարերգերը, ավանդաբար Քուչակին վերագրվող մի քանի հարյուր հայրենները, սայաթնուկյան ու աբովյանական բայաթներն էլ նկատի ունենանք, ապա քառյակի ժանրի սկզբնավորումը պետք է որոնենք միջնադարյան բանավեպի հեռավոր խորքերում եւ իրանական գրականության հսկաներ Օմար Խայյամի, Աֆգելեդին Կադանի, Բաբա Թահերի եւ ուրիշների հետ ունեցած առնչություններում: Սակայն հայ իրականության մեջ նոր ժամանակներում ինչպես պոեմի ու բալլադի, այնպես էլ քառյակի ժանրի իսկական վերածնունդն ու բուռն զարգացումն արդարացիորեն կապված են Հովհ. Թումանյանի անվան հետ: Ինչպես վերը նշվեց, քանակով մեծ չէ նրա քառյակագրական ժառանգությունը. նա ընդամենը երկու քառյակ գրել էր 1890 թ., իսկ բացարձակ մեծամասնությունը՝ 67 քառյակ՝ 1916-1922 թթ., երբ գրական վարպետության հետ միասին բարձրակետին էին հասել նրա աշխարհաճանաչողությունն ու կենսափորձը:

Ի դեպ՝ սա գրեթե օրինաչափություն է, որ նկատվում է հատկապես մեծ բանաստեղծների պարագայում՝ նաեւ հարեւան ժողովուրդների գրականություններում: Այսպես՝ 11-րդ դ. պարսիկ մտածող Օմար Խայյամի գունեղ երկու քառյակներ հավաստում են, որ շուրջ 90 տարի ապրած այդ երեւելի մաթեմատիկոսը, աստղագետն ու փիլիսոփան, որն աշխարհում ավելի շատ հռչակված է իր հանճարեղ քառյակներով, դրանց զգալի մասը գրել է յոթանասուն եւ ավելի բարձր տարիքում, երբ արդեն անցել էր իր երկրային կյանքի հիմնական ճանապարհը, դատարկել իր կյանքի գինու «յոթանասուն գավաթները», վաղուց ուներ «ճերմակած մազեր», սակայն երբ արդեն սաստկացել էր ուրախ սրտով ապրելու անմար տենչը.

*Վաղը ելնեմ որոշ պարզեմ չարդավանի,
Ճերմակ մազով ձեռքս առնեմ կարմիր գինին,*

Կյանքս, ավա՛ղ, յոթանասուն գավաթն անցավ,

Թե ոչ հիմա, էլ ե՛րբ սիրտս ուրախ լինի: (Նույն տեղում, էջ 106):

Ահա եւ երկրորդ քառյակը.

Սատանայից հրաժարման ուխտս պիտի դրժեմ հիմա,

Ճերմակ մազով՝ գինու թասի շուրջը պիտի շրջեմ հիմա,

Կյանքիս գինու յոթանասուն թասերն արդեն դատարկվեցին,


Քնարիկ Ավետիսյան, «Աստվածածնի տաճկերագրությունը հայ միջնադարյան արվեստում»

Հայկական արվեստաբանության մեջ առաջին անգամ ծավալուն ուսումնասիրության նյութ է դարձել ս. Աստվածածնի պատկերագրությունը: Արվեստասեր ընթերցողի սեղանին է արվեստագիտության թեկնածու Քնարիկ Ավետիսյանի հեղինակած «Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում» ուշագրավ աշխատությունը:

Եթե հայացք ձգենք քրիստոնեական կերպարվեստի անցած ուղուն եւ այդ ճանապարհին արարված բյուրավոր ստեղծագործություններին, ապա կտեսնենք, որ աստվածաշնչյան պատկերագրվող բազմազան թեմաների ու կերպարների շարքում իր ուրույն տեղն ու ասելիքն ունի ս. Աստվածածնի լուսաշող կերպարը: Բազմադարյան այդ ճանապարհին են ստեղծվել, փուլ առ փուլ զարգացել ու բյուրեղացել մարեմաբանական ձեւակերպումներից բխող պատկերագրական տիպերը, կերպարի ներկայացման կանոններն ու նրան հարկի խորհրդաբա-

նությունը՝ իր բոլոր բաղադրիչներով: Այդ պատկերները դիտվել են որպես հոգեւոր կյանքի ուղեցույց-ուղերձ, ընկալվել որպես հորիզոնի խորին:

Ս. Աստվածածնի կերպարը տիրապետող է եղել նաեւ հայկական միջնադարյան արվեստում դեռ վաղագույն շրջանից, եղել է սիրված ու բարեբանված: Բոլոր դարերում մեզանում ստեղծվել են ներկայանալի գործեր: Բայց այս ստեղծագործությունները երբեւէ չէին դարձել համահավաք հետազոտման եւ արվեստաբանական-համեմատական վերլուծության առարկա: Եվ այդ բացն այսօր լրացնում է «Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում» գիրքը, որը հեղինակի երկարամյա ու հետեւողական աշխատանքի արգասիքն է: Գրքում արծարծված թեմայի ժամանակագրական ընդգրկումը մեծ է՝ սկսած 5-6-րդ դարերից մինչեւ 19-րդ դարի երկրորդ կեսը: Պարզ ու մատչելի շարադրանքով ներկայացված են ս. Աստվա-



ծածնի սրբապատկերային (իկոնա) այն տիպերը (Օդիգիտորիա, Օրանտա, Թագուհի, Բարեխոս, Կանաղադատանք, Սոսնոու, Հաղթագործ եւ այլն), որոնք ընդունված ու կիրառվել են եղել Հայ Եկեղեցում: Դրանք քանդակներ են (կոթողների, խաչքարերի ու եկեղեցիների պատերի վրա),

Ուրախության պահն այս վերջին ձեռքից պետք չէ թողնել, հիմա՛ր:

(Նույն տեղում, էջ 144: Երկու քառյակների ընդգծումներն էլ մերն են - Ս. Մ.):

Այս օրինակները լավագույն գրական դասն են բոլոր սկսնակներին ու նրանց, ովքեր, խաբվելով Խայյամի, Կադանու ու թումանյանական քառյակների ձեւի ջինջ պարզությունից, կարծում են, թե քառյակը այնքան հեշտ ու հասարակ ժանրաձեւ է, որ իրենք էլ կարող են նրանց պես գրել եւ իրենց բանաստեղծական կենսագրությունը (եթե, իհարկե, այդպիսին ունեն), սկսում են քառյակներ գրելով: Այնինչ Թումանյանը հանճարեղորեն յուրացրել էր քառյակագրության հայ եւ արեւելյան փորձը եւ բարձրագույն հզորության հասցրել իր անհատականությունը: Աֆգելեդին Կադանիի քառյակները, մանավանդ «Ասում են» թե հազար տարին մեկ անգամ» եւ «Հոգուդ հավքը թե որ թռավ» տողերով սկսվողները նա թարգմանել է այնպիսի հարազատությամբ ու վարպետությամբ, որ ասես դրանք հենց հայերեն բնագրերը լինեն: Այս վարպետության շնորհիվ էլ թումանյանական քառյակները, որոնք նա համարել է իր «հոգու կենսագրության զորեղ շորիխները»՝ ձեւի եւ բովանդակության կատարյալ ներդաշնակության իմաստով, օրինակելի են ուսանելի դարձան նրա հաջորդներ Ե. Չարենցի, Հովհ. Շիրազի եւ մյուսների համար:

Պատահական չէր, որ նախապես տերյանական դպրոցի աշակերտ Ե. Չարենցը, որ անընդհատ իր ուսուցչի պես տաղաչափական դասական ու բազմաձեւ կառույցների եւ նորանոր արտահայտչաձեւերի տենդազին որոնումների մեջ էր, 1922-1924 թթ.՝ հատկապես «Երեքի» դեկլարացիայի «ձախ» որոնումների շրջանում, ռուս ֆուտուրիստների՝ հատկապես Մայակովսկու հետեւողությամբ թեւ կարճատեւ մի պահ հակադրվեց իր մերձավոր ուսուցիչներ Թումանյանին, Իսահակյանին, իրեն «ոգու տրտունջի» արվեստը սովորեցրած Տերյանին ու մյուս դասականներին, բայց արտասահմանյան շրջագայության ընթացքում ու նրանից անմիջապես հետո արագ կողմնորոշումով՝ վերստին հաշտվեց նրանց ստեղծած գեղարվեստական «լուսավոր գանձերի» ու թողած պայծառ հիշատակի հետ:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

որմանակարներ, մանրանկարներ, հաստոցային գեղանկարներ, եկեղեցական վարագույներ, ձեռագրերի կազմեր եւ եկեղեցածիսական արվեստի այլ նմուշներ: Անդրադարձ է կատարված նաեւ ս. Աստվածածնի սակավ հանդիպող պատկերագրական տիպերին:

Աշխատության մեջ վերհանված ու վերլուծված են ս. Աստվածածնի պատկերագրական տիպերի կազմավորման պատմական փուլերն ու զարգացումը, դրանց հորինվածքներն ու խորհրդաբանությունը, դավանական համապատասխանությունը, տեղն ու դերը հայկական եկեղեցիների արտաքին ու ներքին հարդարանքում, մանրանկարչության ու որմնակարչության մեջ: Բերված գրեթե բոլոր օրինակները ենթարկված են համեմատական քննության՝ աչքի առաջ ունենալով համաքրիստոնեական արվեստի համապատասխան ստեղծագործությունները:

«Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում» գիրքը լուրջ ներդրում է հայկական արվեստագիտության մեջ: Այն անկասկած կհետաքրքրի ոչ միայն մասնագետներին, այլեւ բոլոր արվեստասերներին:

Ավետ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Արվեստաբան

Մարո ԱՆԱՇԱՆ

Սկիզբը՝ թիվ 7-9, 11, 13

ԱՐԾԿԵ ԲԱՂԱՔՈՒՄ

Այդ օրը մայրս ինձ սովորականից շատ շուտ արթնացրեց. մութը լուսից չէր անջատվել. աքաղաղները, ծուղրուղու կանչելով, իրար հետ մրցում, լուսաբացն էին ողջունում:

Մայրս խուրջինը ուսը գցեց, իմ ձեռքից բռնեց, տան դուռը ամուր փակեց, ապա դռան դեմը կանգնած՝ երեսը մի քանի անգամ խաչակնքեց, տան դուռը կարոտով համբուրեց, մի քանի անգամ հետ-հետ նայելով, հարազատ օջախի կարոտը սրտում՝ գոգնոցի ծայրով արցունքները սրբեց եւ բակ դուրս եկավ:

Կանայք, մեկը մյուսին ձայն տալով, մի մեծ խումբ կազմեցին: Քնում էինք... Ոչ մի թուրք ու քուրդ չէր երեւում:

Կամաց-կամաց մութն իր սեւ փեշերը հավաքեց, եւ լույսն իր սպիտակ, լուսեղեն վարսերը փռեց մեր ճանապարհին:

Առաջինը մեզ դիմավորեց մի լեշակեր ագռավ՝ ինչ-որ դիակի աղիքները կտցահարելով եւ կուլ տալով: Մի քանի քայլ այն կողմ կաշաղակների մի խումբ կտցահարում էր մի այլ դիակի դեմքն ու մարմինը: Լուռ ու գլխահակ քայլում էինք. մեր աչ ու ձախ կողմերում՝ դիակներ՝ դիակներ, մերկացած, կիսակեր, ոսկրացած, գլխատված եւ զարշահոտ: Մի գյուղի մոտ երկու գամփռ, գոմալով, ատամները շրխկացնելով, կռվում էին մի մանկան թմկիկ դիակի վրա: Մեկը քաշում էր մանկան թեւից, մյուսը՝ ոտքից: Այդ ցնցող եւ սրտաճմլիկ տեսարանից բոլորս արտասվեցինք: Մի կին քարով խփեց շներից մեկին. դրությունը ոչնչով չփոխվեց. գամփռներն ավելի զագագեցին, ավելի ուժգին հարձակվեցին մանկան դիակի վրա:

Մի նեղ կածանով բարձրանում էինք բլուրն ի վեր: Քիչ հետո մեր առջեւ փռվեց կանաչագգեստ Արծկե քաղաքը՝ թեւերը տարածած Սիփանի գույգ բլուրներին, իսկ ոտքերն ասես լվանում էր Բզնուկյանց լճի կապույտ ու գուլալ ջրերում:

ԻՄ ԿՅԱՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ



Բլուրներից մեկի գրկում կծկվել էր Սքանչելագործ Սուրբ Կարապետի վանքը: - Սքանչելագործ Սուրբ Կարապետ, ուտաբոքիկ քո դուռն եմ գալիս. դու փրկի՛ր իմ միակ որդուն, մի մարի իմ օջախի ծուխը,- ասում էր մի կին՝ հայացքն ու ձեռքերը դեպի Սուրբ Կարապետի վանքն ուղղած: Հոգնած ու քաղցած, բայց ահ ու սարսափից ուժ հավաքած՝ քայլում ենք: Արեւը դեռ չծագած՝ մտանք Արծկե քաղաքի նեղ ու ոլորապտույտ փողոցները: Բարձրաբերձ եւ հաստաբուն ընկուզենիները փողոցի երկու կողմերից եկել իրար էին միահյուսվել եւ ստվերախիտ ու հաճելի զովություն ստեղծել փողոցներում: Զաղաքը լուռ էր եւ անվրդով: Բլուրի վրա ծվարել էր քրոջս մենավոր տունը: Դուռը կամաց թակեցինք: Դռանը մոտեցավ քրոջս սկեսուրը:

- Ո՞վ է, ո՞ւմ եք ուզում:
- Ես եմ, խնամի ջան,- պատասխանեց մայրս:

Դուռը բացվեց: Խնամիները լաց լինելով գրկեցին միմյանց: Պատմեցին իրենց գլխին եկածը, տեսածն ու լսածը: Քույրս՝ Նուբարը, մորս ձայնը լսելով՝ անկողնուց վեր թռավ ու լացով մորս գիրկն ընկավ: Նրանք երկար նստեցին, պատմեցին, մորմոքեցին:

- Քնանք-գնանք, խնամի՛, գնանք իմ մի-նուճար որդուն տես,- ասաց խնամի Եղսոն՝ մորմոքով ու արտասովելով:

Քնանք: Նա ցույց տվեց մի փոս՝ լցված հարյուրավոր մորթված դիակներով եւ հողի բարակ շերտով ծածկված, որի տակից երեւում էին մարդկանց ուռած, կապտած ձեռքերն ու ոտքերը: Բոլորս երկար, շատ երկար կանգնեցինք, նայեցինք, մղկտահինք եւ փշրված սրտերով տուն դարձանք:

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՍ ՅՈՒՍՈՒՖԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Քրոջս հարեւան եւ հորս մտերիմ ընկեր Յուսուֆի կինը՝ Անա բաջին, մորս գնալն իմանալով, մեզ տեսության եկավ: Նա ու մայրս հարազատների պես շերմ գրկախառնվեցին ու համբուրվեցին: Անա բաջին մորս ականջին ինչ-որ բնականաբար երկուսով միասին լաց եղան: Առանց բակի Երևոյունը հասկանալով՝ ես էլ լաց եղա:

Չեմ հիշում ամիսներ թե տարիներ էին անցել, ինչ մենք քրոջս տան էինք ապրում: Բակում ունեի թուրքի լամուկ խաղողնկերներ, որոնց հետ խոսում էի թուրքերեն: Այնտեղ՝ դրսում, թուրքերը հայերի արյունն էին թափում, հազարներին սրի ու հրի էին քաշում, իսկ այստեղ՝ բակում, մենք՝ հայ ու թուրք երեխաներս, հաշտ ու խաղաղ թռչկոտում ու խաղում էինք: Անա բաջին ինձ իր երեխաներին հավասար սիրում, գուրգուրում եւ շաքար-լոխում էր տալիս: Ամեն

ինչ կարծես խաղաղ էր. չէինք տեսնում թուրքերի եւ քրդերի նվաստացնող արարքներն ու վայրագությունները:

Գիշերը մորս անուշ գրկում պառկած, ձեռքերս նրա լուսեղեն ու քաղցրիկ ստինքներին դրած, դեմքս նրանց արանքում մխրճած՝ հանգիստ քնում էի:

Առավոտյան՝ դեռ արեւը չծագած, մեր տան դուռը չարագուշակ արագությամբ ծեծեցին: Մայրս սարսափահար, սրտի տրոփյունով դռանը մոտեցավ:

- Ո՞վ է:

- Ես եմ, բաջի,- տագնապալի ձայնով ասաց Անա բաջին:

- Գտա՛ն... տղայիդ... Մուշեղին տա-րան... դո՛ւրս արի...

Մայրս ու քույրս խելակորույս, լաց ու ճիչով, գլխներին խփելով, դուրս վազեցին: Նրանց լացին միախառնվեց նաեւ իմ մանկական զիլ ճիչը: Անա բաջին առջեւից, իսկ մենք բոլորս նրա հետեւից վազում էինք: Զաղաքից քիչ հեռու մեր գյուղի երկու երիտասարդների հետ միասին (որոնց անունները չեմ հիշում) տեսանք եղբորս: Նրանց վրա հրացանի փողերն ուղղած, կանգնած էին չորս ասկյարներ: Մենք դեռ նոր էինք մոտեցել, երբ լսվեց հրացանի համազարկերը. երեքն էլ տապալվեցին գետնին: Ասկյարները հեռացան: Մայրս խելագար ճիչով, աննկարագրելի տեսքով վազեց դեպի եղբայրս եւ ուշագնաց ընկավ նրա վրա: Եղբայրս ջղածիզ շարժումներով, մորթվող հավի պես թեւերը թափահարելով, հանգավ: Քույրս իրեն չկորցրեց, գնաց շուր բերեց եւ շփեց մորս դեմքին եւ նրան մասամբ ուշքի բերեց: Հեռվից մի թրքուհի, դարերի ռիթմ սրտում, ուրազը ձեռքին, հարձակվեց կիսամեռ տղամարդկանցից մեկի վրա եւ երկու կես արեց նրա գլուխը: Այլ կարմիր արյունը շատրվանի պես դուրս ցայտեց նրա բերանից եւ ներծծվեց ավազներում: Գագազած թրքուհին, արևաթաթախ ուրազը դեռ շարտելով, «գլուր, իթ օլի, իթ» հայիղելով, ասաց:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 3

Տեղին է հիշել Արշակ Զոպանյանի խոսքերը Խորենացու մասին. «Խորենացի բանաստեղծ մըն է, որ յղացած է ծրագիրը Հայոց Պատմության. հայրենասեր բանաստեղծը հոն կ'երեսայ թե՛ ծրագրին ամբողջության եւ թե՛ անոր լաւագոյն մասերուն գրականօրէն քաննելի գործադրութեան, զօրեղ շարադրութեան, կուռ ուժին մէջ: ... Խորենացին իր ամբողջ գործին մէջ մտածող բանաստեղծ մըն է, որոշ ու լայն իմաստութեամբ մը տիրապետուած, տոգորուած, այնքան հմուտ, որքան ներշնչեալ բանաստեղծ մը» (Արշակ Զոպանյան, Գրագետն ու մարդը Մովսէս Խորենացիի մէջ, «Անահիտ» հանդես, Փարիզ, 1931, էջ 4):

Իր «Հայոց պատմության» ամբողջ ընթացքում Խորենացին հանդես է բերում մտքի զարմանալի կարգապահություն, զգաստ վերաբերմունք ամեն ինչի նկատմամբ, պատմության յուրաքանչյուր փաստի ու իրողության խստահայաց ու տրամաբանական ըմբռնում: Նրա մեջ շատ ուժեղ է քաղաքացին: Պատմիչի հոգեւոր կերպարն առանձնակի թանձրացումով է դրսեւորվել նրա աշխատության 3-րդ գրքի վերջին՝ 68-րդ գլխում, որը յուրահատուկ ձեւով ամփոփում է ողջ հայոց պատմությունը: Այստեղ անթաքույց կերպով արտահայտվել է Խորենացու ժամանակի նկարագիրը, բայց ոչ թե անտարբեր պատումով, այլ հեղինակի զգացմունքային եւ մտավոր ակտիվ վերաբերմունքով: Այս գլուխն աչքի է ընկնում խորողրեզականությամբ եւ միաժամանակ Խորենացու՝ իր ժամա-

Նայրենասիրական ողբեր

նակի նկատմամբ ունեցած անբավականությամբ եւ տրտուռնքով:

Հիրավի, հայ պատմագետարվեստական արձակի ամենագագամունքային էջերից մեկն է «Ողբը», որտեղ Խորենացին կիսվում է ընթերցողի հետ իր ցավերի եւ տառապանքների մասին: Պատմիչի եռանդը, բուն հայացքներն ու նրանց շարժառիթները կապված են քաղաքական անկման ու ժողովրդի հետագա տառապանքների հետ: Ուրիշ խոսքով՝ Խորենացին հայոց պատմությանն է դիմում իր ապրած օրերի թելադրանքով, այժմեական ցավի եւ երազների դիրքից՝ պատասխանելու ժամանակի այրող հարցերին: Խորենացին ողբում է հայոց քաղաքական եւ հոգեւոր անկախության անկումը, Արշակունիների եւ Գրիգոր Լուսավորչի շառավիղների կործանումը: «Ողբի» առաջին իսկ տողը հրավեր է կարծես ընթերցողին՝ հուշելով, որ նրանք ունենան ազգային մտածողություն, ապրեն երկրի հոգսերով, մտածեն ժողովրդի գալիքի մասին: Կա ե՛ւ թշվառության դիտում, ե՛ւ հպարտություն հայ լինելու համար, որովհետեւ հայոց ազգը, ինչպես Խորենացին է վավերացնում, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնն է, միաժամանակ նաեւ մի տառապալի ժողովուրդ, որի արդի վճակը մարդկանց մղում է հուսահատության եւ հոգեւոր տվայտանքի. «Ողբում եմ քեզ, հայոց՝ աշխարհի, ողբում եմ քեզ, բոլոր հյուս-



սիսային ազգերի մեջ վեհագույնը, որովհետեւ վերացան թագավոր ու քահանա, խորհրդական ու ուսուցանող, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը» (Սույն տեղում, էջ 350):

Խորենացու համար մեծ վիշտ է այն, որ Հայաստանում դադարել է Արշակունյաց դինաստիան, վերացել է հայկական պետականությունը: Իսկ եթե չկա այդ պետականությունը, նշանակում է՝ խախտվել են նաեւ այդ ժողովրդի բնական վիճակն ու գոյությունը: Եվ խորհելով այս ամենի մասին՝ քերթողահայրը ողբում է դառնորեն. «Երբ մտածում եմ այս բաների մասին, իմ մեջ հառաչանք եւ արտասուք եւ ծագում, ինձ թելադրում են տխրա-


լից եւ սգավոր խոսք ասել» (Սույն տեղում, էջ 353): Դրան զուգակշիռ ցավ է եւ այն, որ Գրիգոր Լուսավորչի տունը Սահակ Պարթևի մահով թափուր էր մնացել, եւ չկար մեկը, որ նստեր կաթողիկոսական աթոռին: Հետեւաբար անշքացել էր Հայոց Եկեղեցին: Ու եթե քաղաքական կյանքում հայոց վրա իշխում էին քարասիրտ օտար կառավարիչները եւ կամ օտարին ծախված, ընդամենը անուկով հայ իշխանները, ուրեք բոլորն էլ ծանրակիր բեռներ էին դնում ժողովրդի վրա, ապա մյուս կողմից Եկեղեցին էլ կորցրել էր իր երբեմնի փայլը, անշքացել էր անցյալի փառքից եւ այլեւս չէր կարողանում դալար տեղերում աղբյուրներ մոտ հովվել իր բանական հոտը. «Խղճում եմ քեզ, Հայաստանայաց եկեղեցիդ՝ բեմիդ բարեկարգությունից

անշքացած, քաջ հովվից եւ հովվակցից զրկված: Այլեւ չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում եւ հանգիստ ջրերի մոտ սնվելիս եւ ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում եւ գահավեժ տեղերում» (Սույն տեղում, էջ 351):

Խորենացին խորին տրտմությամբ է հայոց պատմության մի շարք անցքեր համեմատում իսրայելացիների պատմության նմանատիպ էջերի հետ՝ ցույց տալով, ողբալով, որ մեր վիճակն ավելի վատթար ու անմխիթար է եղել, քան նրանցը. «... եւ մենք ենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից: Ռորվիտեւե այնպես չէ (մեր վիճակը), ինչպես հնում այն (իսրայելացուց) ժողովուրդը, այլ մեր թշվառությունն ավելի է: Ռորվիտեւե Մովսեսը վերացվում է, բայց Հեւսուն չի հաջորդում, որ առաջնորդի դեպի Ավետյաց երկիրը: Ռոբովամն իր ժողովրդից մերժվեց, բայց նրան փոխարինեց Նաբատի որդին, եւ Աստծու մարդուն ոչ թե առյուծը ոչնչացրեց, այլ հասուն տարիքը: ... Սեղեկիան գերի տարվեց, բայց չկա Չորաբաբել, որ տերությունը նորոգի... պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակարեն չի փրկում: Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք: Արհավիրք հեթանոսների կողմից եւ կռիվներ հերձվածողների կողմից, եւ չկա այն խորհրդականը, որ խրատներ կարդար եւ պատերազմի պատրաստեք» (Սույն տեղում, էջ 352):

Շարունակելի

Կարդան ԵՐԿՆԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու,
դոցենտ



Սկիզբը՝ թիվ 11, 13

Արժանահիշատակ են նաեւ Արծրունու մեկնաբանությունները ֆրանսիական մամուլի վերաբերյալ: Նա միանգամայն իրավացի է, երբ մամուլի վրա դնում է ոչ միայն տեղեկատվական, այլև դաստիարակչական գործառնություն: Նույն չափանիշներով է նա մոտենում նաեւ Ֆրանսիայի հասարակաց կարծիքի ուսումնասիրմանը: Անմիջապես երեւում է Արծրունու քննադատական ոգին, երբ նա հավանություն է տալիս ֆրանսիացի այն մտածողների տեսակետներին, ովքեր անխնայ քննադատում են իրենց հասարակության մեջ հանդիպող թերությունները: Նա ընդգծված համակրանքով մեջբերում է ֆրանսիացի այդ մարդկանց կարծիքները եւ կատարում իր համար ցանկալի ընդհանրացումը («Այդ տեսակ խիստ քննադատական, ինքնաքննող ուղղության են հասել այժմ ֆրանսիական ամենանշանավոր մտածողները» (1889, հ. 98), որն ուղղակի արձագանքն է նաեւ այն մտքերի, որ ինքը հայտնում էր «Մշակի» ուղղության վերաբերյալ. «Խստությամբ քննադատել հայի պակասությունները, անխնայ մտրակել եւ անողորմ կերպով մերկացնել այդ պակասությունները» (1890, հ. 3): Արծրունին ամփոփում է Փարիզից ու ֆրանսիական կյանքից ստացած

ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՀՈՒՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

իր տպավորությունները՝ կարողանալով ոչ միայն հաղորդել իր տեսածն ու լսածը, այլև ընթերցողի համար գնահատել ու տարբերակել իր պատկերացրած օգտակարն ու անընդունելին:

1890-ին «Մշակի» հ. 49-ում եւ 50-ում լույս է տեսնում Արծրունու «Վենեցիա» հուշագրությունը՝ թվագրված 1870-ով: Այդ ժամանակ (1870) Արծրունին Եվրոպայում էր, եղել էր նաեւ Վենետիկում, որտեղից թղթակցում էր «Հայկական աշխարհին»: Նա հուշագրության մեջ էլ նշում է, որ Վիեննա էր մեկնել հիմնականում Միսիթարյան միաբանների մոտ հայերեն պարապելու նպատակով եւ մի քանի ամիս անցկացրել է այնտեղ: Կյանքի այդ մի քանի ամիսների հուշերն էլ ընկած են այս հուշագրության հիմքում: Այստեղ նա մանրամասն նկարագրում է Սուրբ Ղազարի վանքը՝ մեծ հիացմունքով խոսելով նաեւ լուսավոր հայացքներով օժտված հայ արքեպիսկոպոսի մասին. «Խաղաղություն, տոկուն աշխատանք, անձնվեր սեր դեպի հայրենիքի հիշատակները եւ միեւնոյն ժամանակ եվրոպական կիրք վարմունքն ու լայն ժամանակակից հայացքներ ամեն հարցերի վրա, - ահա Վենեցիայի սուրբ հայրերի հատկանիշը» (1890, հ. 49): Արծրունին նաեւ իրավացիորեն անուրանալի է համարում նրանց ծառայությունը հայ գրականությանն ու արվեստին: Նա առանձին ջերմությամբ է խոսում հատկապես Ղեւոնդ Ալիշանի մասին եւ դպրոցի (Դաֆայեյան) բոլոր հաջողությունները կապում է նրա անձի հետ, քանի որ վերջինս լայնախոհ անհատ է. «Ալիշանի անխարդախ, համակրելի, անկեղծ բնավորությունը, նրա լայն մարդասիրական եւ հայրենասիրական անձնվեր հանճարը կերպարանավորվում էր դպրոցի թե՛ ամբողջության եւ թե՛ նրա յուրաքանչյուր մանրամասնության մեջ» (1890, հ. 50): Համարձակ կարելի է պնդել, որ այս հուշագրական երկը հենց Ալիշանի համար է գրված, ավելի ստույգ՝ նրա անձը գնահատելու համար: Կարծում ենք, որ այս դեպքում Արծրունին իսկապես չի չափազանցում, երբ ամենաբեղմնավոր գրիչ ունեցող հային համարում է խելացի մանկավարժ, հայերին եւ ամբողջ մարդկությանը հայտնի ուսումնական մարդ, գրող եւ բանաստեղծ:

Իսկապես, այս հուշագրության մեջ Արծրունին ավելի շատ նպատակ է դնում ցույց տալ իսկական հայրենասեր հայերին, մարդկանց, ովքեր ապրելով Հայաստանից շատ հեռու, ամեն ինչ անում են պահպանելու հայկական ոգին: Անկախ իր դավանանքից՝ Ալիշանն Արծրունու համար դառնում է հայրենասիրության օրինակելի տիպար, ում դավանությունը երբեք չի կարող վտանգ ներկայացնել հայության համար:

1890 թ. նշվում էր Արծրունու գրական գործունեության քսանհինգամյակը, եւ նույն տարվա ամռան վերջում Արծրունին գնում է ճանապարհորդելու Երեւանյան նահանգում: Համանուն վերնագրով տպավորությունները լույս են տեսնում «Մշակի» 102-117-րդ համարներում: Ի տարբերություն քննված նախորդ հուշագրությունների, որոնք ներկայացնում էին օտար երկրներ ու ժողովուրդներ, այստեղ Արծրունին խոսում է սեփական երկրի ու ժողովրդի մասին: Չպետք է մոռանալ, որ Թիֆլիսում երկար տարիներ (մոտ 18 տարի) խմբագրելով հայկական թերթ, խոսելով հայի խնդիրներից, մտահոգված լինելով հայության ապագայով եւ ներկայացնելով նրա թշվառ վիճակը՝ Արծրունին իրականում ապրել էր տառաշխարհիկ կյանքով, չէր շփվել բուն ժողովրդի հետ, իր աչքով չէր տեսել իրական Հայաստանը: Պատահական չէ, որ այս մասին խոսում է նաեւ Լեւոն՝ ընդունելով նաեւ, որ մինչ այդ արված բոլոր դատողությունների հիմքում ընկած էր

ընդամենը Թիֆլիսի հայ գաղթականության քաղաքային կյանքը: Եվ իսկապես, այս հուշագրություն-տպավորություններն արդեն վերաբերում են 19-րդ դարավերջի մեր իրականությանը՝ արտացոլելով այն իր բնորոշ կողմերով:

Առաջին հիացական տպավորություններից հետո («Դիլիջանի ձոր, Սեւանի ծով, Մասիս») Արծրունին անմիջապես տեսնում է իր պատկերացրածի եւ իրականի խոր հակապատկերը: Մուրացանի «Առաքյալը» վիպակի հերոսի՝ Կամարյանի նման նա էլ անմիջապես նկատում է հայկական եւ մալականների գյուղերի տարբերությունները, որն էլ Արծրունուն հիմք է տալիս անմիջապես քննադատել. «Դարերի ընթացքում հայը ոչինչ չմոռացավ եւ ոչինչ չսովորեց. հայը, այո՛, վերին աստիճանի աշխատասեր է, բայց նրա աշխատասիրությունը՝ մեղվի կամ մրջյունի աշխատասիրություն է, - անշարժ, զուրկ առաջադիմական, վերանորոգիչ ոգուց» (1890, հ. 102): Արծրունին հայ գյուղացուն համարում է «անշարժ ավանդության ստրուկը», որովհետեւ վերջինս երբեք չի շեղվի իր պապերի ավանդություններից ու սովորություններից, իսկ դրանք, ինչպես արդեն նկատել ենք, նա համարում էր կյանքի առաջադիմությանը խոչընդոտող գլխավոր պատճառները: Հասկանալի է դառնում այս դեպքում նրա անզուսպ վրդովմունքը, երբ իր աչքով տեսնում է տարիներ շարունակ իր քննադատած երեւույթները:

Հետաքրքիր է հատկապես հուշագրության այն հատվածը, որում Արծրունին սկսում է գնահատել Երեւան քաղաքը՝ իր տեսած Թիֆլիսի փոխարեն տեսնելով չալահատակված, աննկարագրելի կեղտով ծածկված փողոցներով մի քաղաք, որտեղ նա դրականորեն առանձնացնում է միայն Աստաֆյան փողոցը (Աստաֆեյան):

Շարունակությունը՝ էջ 8

Սուրբ Բարսեղ Եղիսկոտուսի՝ [ԵՐԿՐՈՐԴ ՃԱՌԸ] Պահի մասին

Սկիզբը՝ էջ 3

Մենք կրում ենք զրահն արդարության (հմմտ. Եփես. 2. 14), իսկ նրանք՝ քաշկագործ (կաճից, թաղիքից գործուած) մի բան (հմմտ. Ա. Սամուել ԺԷ. 5-7): Եւ սուտերը մեր Սուրբ Հոգու օգնականութեամբ է [գործում], իսկ նրանք երկաթեայ թրով եւ պաշտպանում: Ուստի սրանով յայտնի է դառնում, որ Նոյն կերպարներն են ուժ տալիս երկու կողմերից [մարտնչող] բանակներին, իսկ մեզ զօրացնում են աւանդները բարեպաշտութեան, մինչդեռ նրանք [մշտապես] որովայնը յագեցնելու կարիք ունեն:

Եւ արդ, շրջան կատարելով, ժամանակը մեզ կրկին հասցրեց այս բազմատեսչալի օրերին. եկե՛ք ամենքս խնդութեամբ ընդունենք նրանց, ինչպես մեր վաղեմի դայեակին, որով եկեղեցին մեզ սնեց եւ ուղղեց դեպի բարեպաշտութիւն: Ուստի երբ մտադրում ես պահեով ընթանալ, մի՛ տխրիր հրեայի պէս, այլ աւետարանական խիճողով զուարճացրու քեզ (հմմտ. Մատթ. 2. 16-17), ոչ թէ սգայ որովայնական կարօտութիւնդ, այլ ուրախացի՛ր՝ հոգեւոր

վայելքներին մասնակցելով, որովհետեւ գիտենք՝ «մարմինը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակը», «քանի որ սրանք միմեանց հակառակ են» (հմմտ. Գաղատ. Ե. 17), խլենք մարմնից վայելքները եւ բազմապատկենք զօրութիւնը մեր հոգիների, որ պահքի միջոցով պարտութեան մատնենք ախտերը եւ յաղթանակած՝ պսակն ընդունենք ժուժկալութեան:

Ռ. Այժմուանից քեզ պատրաստիր պահքի պարկեշտութեանը. այսօրուայ արբեցութեամբ վաղուայ զսպուածութիւնդ մի՛ ապականիր: Չա՛ր է խորհուրդն այդ, եւ այդ միտքը՝ նենգ. «Մեզ համար հինգ օրով պահք է հռչակուել, ուստի այսօր արբեցութեան մէջ ընկղմուենք»: Հարսանեաց օրինական հանդեսով իր տունը պարկեշտ կին բերելու պատրաստուողը մինչ այդ հարճերին եւ պոռնիկներին ներս չի բերում, որովհետեւ օրինաւոր կինն ապականեալների հետ տնակցութեանը չի համբերի: Ուստի դու եւս, պահքին ապաւինելով, ներս մի՛ թողնիր ծաղրասեր եւ մոլեկան արբեցութեանը՝

ամենայայտնի պոռնիկին, մօրն անամօթութեան, որ սովոր է ամենայն ամօթալի բաներին, որովհետեւ արբեցութեամբ աղտոնդի անձի մէջ պահքն ու աղօթքը մուտք չեն գործի: Պահեցողին Զրիստոս կընդունի սրբազան պարսպից ներս, իսկ արբեցութեամբ զբաղուողին եւ պիղծին մօտ չի թողնի: Եւ եթէ վաղը գաս, նեխեալ գինու ծահաւիտութիւնը տարածելով, արդե՞ք արբեցութիւնդ հնարաւոր կլինի պահեցութիւնն համարել: Մտածի՛ր ոչ թէ այն մասին՝ իբրեւ մի ժամանակ գինին ի ներս չես յեղել, այլ որ տակաւին չես մաքրուել գինուց: Եւ [սման դէպքում] ո՞ր [շարքը] դասեմ քեզ. արբեցողների՞, թե՞ պահեցողների: Նախորդած գինեկիզութիւնն (արբեցութիւնն) իր կողմն է ձգում, իսկ ներկայիս [սննդի] կարօտութիւնը պահքի մասին է վկայում: Արբեցութիւնը քեզ վիճարկում է իբրեւ իր ստրուկի եւ բաց չի թողնում քեզ՝ յայտնապէս իբրեւ ապացոյց ներկայացնելով [քեզնից տարածուող] գինու հոտը, որ գալիս է ինչպէս կարասից: Այդպէս պահքի առաջին օրն իսկական չի լին քեզ համար, որովհետեւ գոյա-



տեւած կլինեն արբեցութեան մնացորդները: Իսկ երբ սկիզբն անբարեբեր է, ամբողջը բացընկեց (մերժեալ, խոտան) է լինում: «Հարբեցողներն... Աստծու արքայութիւնը չպիտի ժառանգեն» (հմմտ. Ա. Կորնթ. 2. 10): Եթէ արբեալ սկսես պահքն, ի՞նչ օգուտ պիտի ստանաս. որովհետեւ եթէ արբեցութիւնը փակում է քո առջեւ արքայութեան դռները, այլեւս ինչ կարիք կայ պահք պահելու: Չե՞ս տեսնում, որ ձի վարժեցնողները, մրցահանդեսից առաջ նժոյգներին նախապատրաստելիս, դրանց կեր չեն տալիս: Իսկ դու կամաւոր կերպով քեզ ծանրացնում ես, յագեցութեամբ եւ շատակերութեամբ գերազանցում ես ոչ բանական եակներին: Ծանրացեալ որովայնը ոչ միայն

մրցավազքի, այլեւ քնելու պարագայում հարմար չէ, որովհետեւ սննդի առատութեամբ ճնշուած՝ ոչ թէ հանդարտուելով թուլանում ես, այլ ստիպուած ես լինում մի կողմից միւսը շրջուել:

Ե. Պահքը պաշտպանում է մանուկներին, ողջախոհ դարձնում երիտասարդներին, պարկեշտացնում ծերերին, որովհետեւ պահքով զարդարուն ալեհերութիւնը պատկառանք է ներշնչում: Կանանց յարմարագոյն զարդը պահքն է. [այն] սանձ [է] ծաղկման ժամանակ, ամուսնութեան ընթացքում՝ պահպանութեանը: Այսպիսին է պահքի խնամքն ամեն ընտանիքի նկատմամբ:

Շարունակությունը՝ էջ 7

Արշիլ Գորկուն նվիրված մի փոքրածավալ հոդվածում ամերիկահայ բանաստեղծ Փիթեր Բալաքյանը նկարագրում է, թե ինչպես է իր ընտանիքի անցյալը ներագրել իր ստեղծագործական կյանքի վրա. «Ազգային ինքնության գործությունը խթան է հանդիսանում ստեղծագործական երեակայության համար: Մեր նախնիները բացահայտում են մեզ ճիշտ այնպես, ինչպես մենք բացահայտում ենք նրանց» (տե՛ս P. Balakian, «Archile Gorky's Embroidered Apron», The Agni Review 26 (1988), էջ 126): Փիթեր Բալաքյանի պոեզիան Արշիլ Գորկու կերպարվեստի պես ցույց է տալիս, թե ինչպես է տեղի ունենում այդ բացահայտումը: Ամերիկահայ բանաստեղծը միափյունում է պատմական, ընտանեական, էթնիկ, ազգային եւ երկրային կապերը մեկ պատկերի մեջ, որն արտացոլում է փոխներառումի առավել խոր շերտերը: Բալաքյանի բանաստեղծությունների դրվագները ոչ միայն ներկայացնում են մարդկային պատմություններ, այլեւ սերմանում են նոր կենսածեղեր: Նշենք, որ Փիթեր Բալաքյանն ստեղծել է երեք բանաստեղծական ժողովածու. «Հայր Ֆիշե», «Լույսի տխուր օրերը», «Արձագանք ամայի կղզուց»: Նշված ժողովածուներից յուրաքանչյուրի շշտադրումները հստակ են: Բանաստեղծի խնամքով միափյունված մտապատկերների ուժը միավորում է նրա պոեզիան եւ այն առաջ է մղում: Բալաքյանի քնարերգության գլխավոր թեմաները նախանշված են «Վերադարձ» բանաստեղծության մեջ, որն ընդգրկված է «Հայր Ֆիշե» ժողովածուի մեջ: Այստեղ «ջրի լուծությունը եւ մարդկանց գետի հունով ավելի հեռուն քշող հոսանքի նշանները հուշում են, որ հոսանքին մինչեւ վերջնակետը հետեւելը կարող է վտանգավոր լինել: Բայց ի հեճուկս դառն բախտի՝ հույս ներշնչող մեկ այլ հոսանք է երեւում, եւ այդ հույսը խթանում է պոետի երեակայությունը.

*Յանկանում ես դու հավատալ նրան,
Որ այս գետն ունի հունն իր անպայման,
Վտակները իր հյուսիս են հոսում
Եվ դատարկվում են գորշ ավազանում,
Իսկ ավազանի ստորին մասում
Երկու տեսակի բույսեր են աճում
Եվ այդ բույսերը ջուրն են ուղղորդում:
Սեւ ապառաժի թիկունքի կողմից
Ծովաճայերն են երեւան գալիս:*

Բանաստեղծը կարծես շարժվում է այս տողերի միջով՝ այն ժամանակ, երբ գետի խոր հունն ուղղություն է փնտրում: Բանաստեղծը փնտրում է մի ձեւ, որն ունակ է

Հաճախությունը եւ վերածնունդը Փիթեր Բալաքյանի տոեգիայում

սանձելու ու միեւնույն ժամանակ առաջ մղելու կենսափորձի ամենափոքր «վտակները»՝ երկակի մշակութային ավանդույթի մեջ: Բալաքյանի բանաստեղծություններում թեմատիկ բովանդակությունն անընդհատ փոխվում է: Նրա երկերում բովանդակությունը մշտապես փոխակերպվում է՝ նոր նպատակների ծառայելու համար: Կոշտ ցողունն ու ֆլոեման, որոնք ջուր են հասցնում փոխակերպման կետին, ստեղծագործական գործընթացի բնական կրկնօրինակի դեր են խաղում: Ստեղծագործական գործընթացը կարծես ձագարի միջով անց է կացնում պատմական իրադարձությունները եւ ուղղորդում է դեպի դրանց փառաբանումը: Այս գործընթացում ոչինչ չի երաշխավորում, որ դա կհասնի իր վերջնակետին: Ինչեւէ: Երբ բանաստեղծությունը մոտենում է իր ավարտին, Ամիշ անունով ագարակատիրոջ կերպարը, ով խնամքով աճեցնում է իր մուրօքը եւ լուիկները՝ ապրիլ ամսվա ցրտաշունչ գիշերների ընթացքում, օգնում է նրան արմատավորել իր հավատը մի հողի մեջ, որտեղ կարգ ու կանոնի օրինակները հրաշքներ են գործում: Դրանք օգնում են, որ «չար ազդեցությունները մասն ջրասույզ վիճակում».

*Աչքաուլունքը ցորնատան պատի
Կնոջը ստիպում է դեմքն իր շրջել.
Մեկ նայվածքով կինն է ունակ
Կախարդին պահել ցորենների տակ:*

Մյուս կողմից պոետի մշակութային անցյալի պատկերները կասկածի տակ են դնում ու միեւնույն ժամանակ հաստատում այն կարծիքը, համաձայն որի՝ մարդկային կյանքն ունի որոշակի ուղղվածություն: Բալաքյանի առավել ուշագրավ գրվածքներից է «Հայաստանի պատմությունը» բանաստեղծությունը, որը նրա «Լույսի տխուր օրերը» շարքի առաջին գործն է: Իրականում շատ քիչ գրվածքներ են եղել, որոնցում անցյալի սարսափներն այնքան ճշգրտորեն են պատկերված, որքան Փիթեր Բալաքյանի վերը հիշատակված բանաստեղծության մեջ: Ամերիկահայ պոետի քերթվածքում բնական աշխարհը ներկայացված է լիակատար խառնաշփոթության մեջ: Ամեն դեպքում, աշխարհն այսպես է տեսնում



կինը, ում միտքն այդ նույն խառնաշփոթ վիճակի մեջ է: Բանաստեղծության իրադարձությունները տեղի են ունենում Նյու Ջերսիում, բայց հոգեբանական մակարդակի վրա տեսարանը ծավալվում է մի երկրում, որտեղ «արեւը խամրել է»: Խոռոչներն ու ճեղքվածքները, որոնք առկա են հողի, երկնքի եւ մարդկային մարմնի վրա, վկայում են համընդհանուր քայքայման մասին, իսկ բանաստեղծի տատիկի աչքերին փչող քամին կարծես քիմիական թթու լինի, որը խաթարում է մարդկային տեսողությունը, եւ որի ազդեցությունը չի թուլանում: Բանաստեղծի պատկերած երկինքը կարծես ծվատված լինի, երկնային հրեշտակները՝ խեղանդամված, իսկ գետը՝ լցված է կոտորածների վկայություններով: Բալաքյանն իր երկի վերջին տան մեջ ներկայացնում է մի աշխարհ, որտեղ լոկ շունչն է նշանավորում անցումը կանոնավոր վիճակից դեպի անկումն ու քայքայումը, իսկ ժամանակի կատեգորիան յուրաքանչյուր այլ բնական ուժի պես փոխում է իր ուղղությունը. այն շարժվում է ներկայից դեպի անցյալ.

*Արդուկը ձեռքին պապս խնամքով
Շալվարն էր բերում իր պատշաճ տեքսին:
Շալվարն իր այդ պապս էր ստացել,
Երբ ոչ մի թռչուն քնից չէր զարթնել:
Իմ պապի հագին չկային կոշիկ,*

*Փողկապ, վերնազգեստ, տաքթակալներ:
Լուռ էր ու խաղաղ այդ կանուխ ժամին.
Ոչ ոք չէր լսի ձայնը թռչունի:*


Այս պատմության նախնական հիմքը ազգի ծվատումն է եւ աքսորը, ինչպես նաեւ՝ կոլեկտիվ հիշողությունը, որը մթագնել էր մահվան պատճառով, իսկ թռչունների խորհրդանշական կերպարներն անկարող են ցեղասպանության վկան դառնալ:

Բանաստեղծի գլխավոր խնդիրն է դառնում «աղբից» կայուն եւ կենսունակ մի աշխարհի ստեղծել: Այդ նոր աշխարհում կյանքը պետք է հասնի իր նպատակակետին: Եթե բանաստեղծին չհաջողվի նոր աշխարհի ստեղծել, ապա նա առնվազն կփորձի գտնել անցյալից պահպանված մնացուկներ, որոնք տակավին կարող են ծառայել մարդկային կյանքին:

Փիթեր Բալաքյանի քնարերգության մեջ հաջորդաբար երեւան է գալիս Հայաստան աշխարհը՝ հատկապես «Լույսի տխուր օրերը» շարքին պատկանող վերջին բանաստեղծությունների մեջ: Այդ բանաստեղծություններում հաստատվում է հայրենյաց երկրի գլխավոր դերը՝ իբրեւ սինկրոֆա: Ընտանեկան եւ մշակութային պատմության յուրաքանչյուր դրվագ կարծես արտացոլում է ողջ մարդկության փորձը:

Շարունակությունը՝ էջ 8

Սուրբ Բարսեղ Եմիսկոտոսի՝ [ԵՐԿՐՈՐԴ ՃԱՌԸ] Պահի մասին



Սկիզբը՝ էջ 6
Իսկ [պահքն] ինչպե՛ս է առաքինացնում հասարակական կեանքը: Ամբողջ քաղաքն ու բազմությունը միանգամից բարեկարգ վիճակի է հասցնում, վաճում է աղաղակը, խաղաղություն հաստատում կռոււմ, լռեցնում հայհոյանքը: Ո՞ր վարժապետը կարող է մօտենալով միանգամից լռեցնել մանկանց ամբոխի աղմուկը, ինչպես պահքն է սկսուելով զսպում քաղաքի խռովությունը: Կերուխումի ո՞ր սիրահարն է յայտնում պահքի ժամանակ, ո՞ր անպարկեշտ հաւաքն է սկսում [այդ օրերին]: Փափուկ ծաղրը, պոռնկական երգերը եւ մոլի կաքաւումներն անմիջապէս քաղաքից դուրս են գալիս, ինչպէս դաժան դատաւորից՝ պահքից հեռու են փախչում:

Եւ եթէ բոլորն իրենց գործերում նրան խորհրդակից դարձնէին, ոչինչ չէր խափանի խորին խաղաղությունը համայն աշխարհում. ո՛չ ազգերը դուրս կգային միմեանց դէմ, ո՛չ զօրքերը կբախուէին իրար: Եթէ պահքն իշխեր [ամենուր], այլեւս ո՛չ գէնք կծուկէին, ո՛չ ատեաններ կժողովէին եւ ո՛չ բանտերում կալանաւորներ կլինէին: Ամայի վայրերում աւազակներ չէին լինի, քաղաքներում՝ զրպարտողներ, ծովերում՝ վայրենկամիչ-

ներ (*ծովահէն*): Եթէ ամենքն աշակերտէին պահքին, ապա Յովբի խօսքի պէս՝ «չէր լսուի հարկահանի ձայնը» (*հմմտ. Յովբ 9. 18*), եւ այսպէս բազմահառաջ ու տիրական չէր լինի մեր կենցաղը, եթէ պահքն այն տնօրինէր, որովհետեւ ակնյայտ է, որ պահքը ոչ միայն

կերակրի ժուժկալութիւն կուտուցանէր, այլ նաեւ օտար կդարձնէր արծաթասիրութիւնն ու ազահուրութիւնը եւ ընդհանրապէս չարիքները բոլոր, որոնք վանելով՝ այլեւս ոչինչ չէր խանգարի խորին խաղաղութեան եւ անխռովութեան մէջ մեր կեանքն անցկացնելուն:

2. Իսկ այժմ, պահքն ի բաց առնելով եւ ճոխութեան տեսից գնալով, իբրեւ կեանքի երանություն՝ ո՛մանք այդ չարիքներից շատերը ներս են թողնում եւ ապականում են իրենց մարմինները: Ուշադրութիւն դարձրու երեսների տարբերութեանը. այսօր երեկոյեան ինչպէս կերեւան քեզ եւ ինչ կերպով՝ վաղը: Այսօր այտուցեալ շառագունում են, [ծածկում] մանր քրտիկներով, խոնաւ աչքերն առաջ են վազում, ներքին խաւարի պատճառով հաստատուն զգայութիւն չունեն: Իսկ վաղը դէմքերը հանդարտ կլինեն, բնական գոյնի, մտքերով լեցուն եւ գիտակցութեամբ կայուն, որովհետեւ բնական վարքին խանգարող ներքին պատճառներ չեն լինի: Պահքը նմանութիւն է հրեշտակներին, խորանակիցն (*յարկակից*) արդարների, ողջախոհութիւնը կեանքի: Պահքն օրէնսդիր դարձրեց Մովսէսին: Սամուէլը պտուղն է պահքի: Պահեցողութեամբ Աստծուն աղաչեց Աննան. «Տէր

Աստուած, զօրութիւնների՝ Տէր, եթէ կամենաս տեսնել Զո աղային տառապանքը, ինձ յիշես եւ արուզաւակ պարգեւես Զո սպասուհուն, մինչեւ նրա մահուան օրը գինի չի խմի ու չի հարքի եւ նրա գլխին ածելի չի դիպչի» (*հմմտ. Ա. Թագ. Ա. 11*): Պահքը կրթեց մեծն Սամփսուին, եւ քանի դեռ [նրանք] անբաժան էին, թշնամիները բիրտերով էին ընկնում, պոկւում էին քաղաքների դարպասները, եւ առիւծները չէին դիմանում նրա ձեռքերի զօրութեանը: Բայց երբ Սամփսուին գրաւեցին արբեցութիւնն ու պոռնկութիւնը, նա բռնուեց թշնամիների կողմից եւ որկուեց աչքերից, ծանակի տրուեց այլազգի մանուկներին: Պահեցողութեամբ Եղիան երեք տարի եւ վեց ամսով փակեց երկինքը (*հմա՛ր երկնքից անձրեւ չտեղաց, հմմտ. Գ. Թագ. ԺԷ. 1*), որովհետեւ տեսաւ, թէ խիստ յագեցութիւնից թշնամութիւն է ծնւում: Եւ ի պահանջել հարկի՝ [Եղիան] նրանց ականաւ պահեցողութեան յանձնեց սովով, որով ասես խաւանմամբ կամ հատելով կտրեց արդէն չափ չճանաչող նրանց մեղքերը՝ վերջ դնելով չարի տաւաժմանը:

Շարունակելի

**Գրաբարից փոխադրեց
Գեորգ ՄԱՂՅԱՆԸ**

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



Սկզբը՝ էջ 6

Ինչքան էլ Արծրունին քննադատում է հայերին, միեւնոյն է, երբ համեմատության խնդիր է առաջանում, հայերին իրավացիորեն մրցակից որեւէ ազգ չի տեսնում՝ համարելով Անդրկովկասի ազգաբնակչությունների թվում միակ կուլտուրական, ընդունակ, դեպի համամարդկային քաղաքակրթական կյանքը հակված ազգը։ Նա համոզված է, որ քաղաքակրթության դեմ պայքարելն անգոր է, եւ թուրքերն ու քրդերը չեն կարող դիմանալ այդ մրցավազքին։ «Քաղաքակրթությունն անողորմ մի ուժ է։ Նա, դիմելով մարդկային հասարակությանը, ասում է։ «Կամ ընդունիր առաջադիմության արգասիքները, կամ մեռիր»։ Այդպես էլ պատահում է թուրքերի, բայց մանավանդ քրդերի հետ, երբ նրանք շփվում են քաղաքակրթության հետ» (1890, հ. 112)։ Այս միտքն ուղղակիորեն հիշեցնում է «Մշակի» գաղափարական սյուններից մեկի՝ Բաֆֆու հայտնի միտքը («Խենթը» վեպում Վարդանի երազը)։ Բայց եթե ժամանակի Բաֆֆին գոնե երկու հարյուր տարի հետո էր տեսնում ցանկալի լուծումը (քրդերի ծուլումը), ապա նրա գաղափարակից Արծրունին այդքան երկար սպասելու միտք չուներ։ Ավելի առաջ է գնում նա, երբ քաղաքակրթությանը չդիմացած քրդերին («չդիմանալով հայերի գերագնաց ուժին») տեսնում է միայն հովիվների եւ հայերի տներում ծառաների դերով։ Չնայած սրան՝ նա անհրաժեշտ է համարում ընթերցողին մանրամասներ հաղորդել քրդերի

նկատուկացի, կենցաղի վերաբերյալ։

Ամփոփելով Արծրունու հուշագրական ժառանգության քննությունը՝ պետք է նկատել, որ հեղինակը բոլոր դեպքերում չի մտնում կողքից դիտողի եւ արձանագրողի դերում, նա անայայման արտահայտում է նաեւ իր զգայուն վերաբերմունքը, նույնիսկ կետ առ կետ լուծումներ առաջարկում։ Այս իմաստով թերեւս նրա հուշագրական երկերը մի փոքր շեղվում են ժանրի դասական նմուշներից, սակայն լիովին տեղավորվում են Արծրունու «դաստիարակչական» ըմբռնումներում։ Նրա հուշագրության մեջ (հատկապես «Մի տարի Շվեյցարիայում», «Փարիզից», «Վենեցիա») ոչ միայն նկատելի է ձգտումը ընթերցողին կարելու ու օգտակար տեղեկություններ հաղորդել, այլեւ հրապարակախոսի հետեւողական քաղաքականությունը՝ օրախնդիր հարցեր առաջ քաշելու վերաբերյալ։ Արծրունին նույնիսկ հուշագրական երկերում մտնում է օգտապաշտ գրականության ջատագով։

Քննված երկերում քիչ չեն նաեւ որեւէ նշանավոր իրադարձության, եվրոպական մշակույթի, այս կամ այն ժողովրդի կյանքի ու կենցաղի գեղարվեստական նկարագրություններ, որոնք նրա հուշագրությունների ավելի մեծ ճանաչողական ու գեղարվեստական արժեք եւ նշանակություն են հաղորդում։

Արշալույս ԳՆԼՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Համաշխարհայինը եւ վերածնունդը Փիթեր Բալաքյանի տոնակատարում

Սկզբը՝ էջ 7

«Պատասխան ամայի կղզուց» շարքին պատկանող «Թորոն Նոտթուն» գրվածքն ընդլայնում է Բալաքյան արվեստագետի առջեւ դրված խնդիրը։ Նշված գործը պոետական շարքի կենտրոնական գործերից է։ Այն հաջորդում է պոետի առավել անձնական բանաստեղծություններին, որոնք նվիրված են հոր մահվանը։ Բալաքյանի ստեղծել է մի պատկերավոր մեծախոսություն։ Վերջինս ունի հստակ կառուցվածք եւ իրենից ներկայացնում է մի մեկնաբանություն՝ նվիրված բանաստեղծության այլ հատվածներին։ Թորոնի ազդեցիկ, անխռով ձայնը բնության եւ մարդկային պատմության փաստերը միահյուսում է մի կայուն ավանդույթի հետ, որը սովորեցնում է մեզ, թե ինչպես է պետք կրել անցյալի բեռը։ Պոեմի բոլոր երեք հատվածները, որոնք իրենցից ներկայացնում են Քոդ հրվանդանում անցկացրած մեկ օրվա խորհրդածությունների շարադրում, ընթերցողին ներքին խորքային մասից տանում են դեպի կենտրոնի տեսանկյունից խավարը։ Թորոն պատկերված բնապատկերի իսկական գիտակ է։ Նա ի գործ է իր նատուրալիստական հայացքով արձանագրել դրա մատուցած խիստ դասերը։ Առաջին



ջին օրը մարդկանց աչքերի առջեւ բացվում է մի խստաշունչ բնապատկեր, որտեղ հեռանկարը մշուշոտված է, իսկ բնությունը՝ հարմարված ուժգին հողմի գրոհին։

Այդ ճյուղերի արանքներում
Ինչ-որ գործը բան է ածում։
Դա նման է հանգույցների,
որ ածում են այլ հանգույցից։
Եվ ամեն մի ձեռքից հետո
Դրանք ավելի հզոր են դառնում։

Այստեղ համայնապատկերի կոպտությունը կարծես «մարտահրավեր է նետում Ամերիկայի բնակիչներին»՝ հնդկացիներին եւ անգլիացիներին»։ Նրանք կամ պետք է հարմարվեն բնության դաժան պայմաններին, կամ պետք է ոչնչանան։

Շարունակելի

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԻՄ ԿՅՎՆՔԻ ՈՐԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ



Սկզբը՝ էջ 5

- Օ՛խ, սիրտս հովացավ գյավուր շներ, դե գնացեք։

Մայրս, գլուխը եղբորս վիրավոր կրծքին դրած, լալիս ու մղկտում էր, իսկ քույրս արձակում էր նրա հագուստների կոճակները։ Գնդակը կպել էր ուղիղ նրա սրտին եւ կրծքին բացել բոսորագույն մի մեծ վարդ։

Մինչեւ մայրամուտ եղբորս մոտ նստած՝ լալիս ու մղկտում էինք։ Քույրս, վերջին ուժերը հավաքելով, ասաց.

- Է՛հ մամա ջան, լացով էլ Մուշեղին հետ չենք բերի, կորցրածն էլ հետ չենք գտնի, արի հիմա մտածենք նրա թաղման մասին. ո՛ր թաղենք, ինչպե՞ս թաղենք։

Նա, վշտից ճոճվելով, գնաց մոտակա ծանոթ մի տնից բախ ու քունգ բերեց։ Մայր ու աղջիկ երկար չարքարվելուց հետո, երկարավուն մի փոս փորեցին եւ եղբորս ոտքից ու գլխից բռնած փոսի մեջ դրեցին։ Մայրս իր գլխաշորով ծածկեց եղբորս դեմքը, իսկ քույրս կորեց իր երկար եւ խիտ մազերի գույզ հյուսերը եւ դրեց եղբորս ծոցը։ Թե ի՞նչ էր այդ նշանակում, եւ մինչեւ օրս էլ չհասկացա։ Ապա քույրս՝ բաժնով, եւ ու մայրս՝ ձեռքերով, արցունքախառն հողը լցրեցինք մեր հարազատի թաքմ վերքերի վրա, գերեզմանի ձեւ տվեցինք եւ վշտաբեկ ու փշրված սրտով տուն դարձանք։

Արդեն հիսուն տարի է անցել այդ օրերից, բայց բոլոր դեպքերն էլ հիշում եմ նույն թարմությամբ, նույն ծանր ապրումներով, նույն ահ ու դողով եւ նույն սարսափով։ Եղբորս՝ Մուշեղի գնդակահարությունից մի քանի օր անց Անա բաջին այսպես պատմեց.

- Մի օր՝ գիշերվա ժամը երեքը կլինեք, երբ մեր տան դուռը ծեծեցին։ Ներս մտավ մի «կին»՝ երկար շորերով եւ դեմքը փաթաթած սեւ յազմայով։ Ո՛ւմ եք ու-

զում, բաջի՛,- հարցրի։ «Կինը» դեն գցեց գլխաշորը... օ՛, ալախ իմ, Մուշեղն էր։ Յուսուֆը լացով փաթաթվեց նրան ու համուրեց։ Ապա Մուշեղը, աղերսագին տոնով մեզ դիմելով, ասաց.

- Կարդա՛շ Յուսուֆ, եթե մեր աղն ու հացը չես մոռացել, փրկիր իմ եւ իմ երկու ընկերների կյանքը, վեց ամիս է ինչ Միփանում արածում ենք, էլ քաղցին չենք դիմանում, հույսներս քեզ հետ կապած՝ դուռը ծեծեցինք։

- Երկար ժամանակ Մուշեղն ու իր ընկերները, պարկերի մեջ նստած, ինչպես «դարմանի» պարկեր, դարմանանոցում թաքնվել էին։ Որպես ավելի ապահով վայր՝ Յուսուֆը նրանց իջեցրեց ջրհոր։ Չիմացանք՝ ոնց, որտեղից իմացան, որ մեր ջրհորում հայեր կան։ Լուսադեմ էր։ Սեւ ասկյարը շրջապատեց մեր տունը եւ սկսեց սարսափելի խուճարկություն։ Ջրհորում գտան Մուշեղին եւ իր ընկերներին, կապկպեցին նրանց ձեռքերն ու տարան։ Մեր ծանոթի միջոցով հազիվ փրկեցինք Յուսուֆի կյանքը։

Երկու օր հետո Անա բաջին նորից մեր տուն եկավ, նորից մորս հետ ըջփչալով խոսեց.

- Բաջի՛, մի գաղտնիք ունեմ քեզ հայտնելու, բայց ոչ ոքի չասեւ։ Մուլլան մեզ ալահով երդվեցրել է, որ այդ գաղտնիքը ոչ ոքի չասենք, բայց ես քեզ պիտի ասեմ, քանի որ չեմ կարող մոռանալ այն աղն ու հացը, որ դու տվել ես իմ չոջուխներին։ Դու փրկեցիր իմ չոջուխներին, եւ ալախը չի խռովի, որ ես էլ փրկեմ քո չոջուխներին։

Նա, սարսափահար շուրջը նայելով, ինձ անհասկացող երեխայի տեղ դնելով, ասաց.

- Հուքմաթը (գաղտնի գործակալություն) որոշել է Արծկեում եղած բոլոր հայերին թունավորել՝ հացի միջոցով։ Այնպես որ մեկ շաբաթ ոչ մի տեղից հաց ու ալյուր չգնես, դու ու քո չոջուխները իմ դոնախն եք։

Մայրս Անա բաջու հետ լուռ գրկախառնվեց եւ երդվեց Մուշեղի թաքմ գերեզմանով, որ այդ մասին ոչ ոքի ոչինչ չի ասի։ Երբ Անա բաջին գնաց, մայրս, քրոջս

տուն կանչելով, ասաց.

- Նուբար՛, աղջի՛կս, ոչ ոքի ձեռքից հաց չվերցնես եւ չուտես, հացը թունավորված է։

Ինձ զգուշացնելու կարիք չէր. ես ամբողջ օրը նրա փեշից կպած էի։

Մյուս օրը Արծկե քաղաքում հազարավոր հայ մայրեր ու որդիներ մահացան։ Նրանց դիակները հավաքում եւ ծովն էին թափում։ Պատմում էին, որ Վանա ծովում թափվող դիակներից մի կղզի էր առաջացել, եւ այն կոչել էին «թունավորվածների կղզի»։

Հիշում եմ՝ երկար ժամանակ լճից բռնած տառեխ կոչված ձուկը ոչ ոք չէր ուտում։ Հաճախ էի լսում այս խոսքերը.

- Տառեխները գյավուրի միս են կերել, փիս դր, փիս (վատն է, վատը)։

Շաբաթներ անցան։ Մի օր էլ Անա բաջին մեր տուն եկավ՝ մորս հետ խոսելու, հանգստացնելու։

- Բաջի՛ ջան, մի բան ասեմ, բայց չնեղանաս, քո եւ քո չոջուխների փրկության համար եմ ասում, ուրիշ բան չհասկանաս, խղճահարվողի տեսքով ու տոնով ասաց Անա բաջին։

- Բավական է որքան հալածվեցիք ու տանջվեցիք, ո՛չ դու եւ իմացել, որ ես թուրք եմ, ո՛չ ես, որ դու՝ հայ. մենք իրար հետ հարազատ քույրերի պես ենք եղել, դու, առանց զգվելու, իմ հացն ես կերել, ես՝ քո, դու իմ քաղցր ջուրն ես խմել, ես՝ քո։ Մեր չոջուխները մեկ ամսանից են կերել ու խմել, իրար հետ մեծացել, եւ ալախը մեզ չի անիծել, չի պատժել։ Արի Նուբարին տուր իմ Մուսային, դու էլ գնա մուլայի մոտ հավատոյ փոխիր, վերջանա գնա, թե չէ ես ի՛նչ

է քո կյանքը՝ տանջա՛նք, անվերջ տանջանք։

- Չէ՛։ Անա՛՜ բաջի, այդ լինել չի կարող, մենք հայ քրիստոնյա ենք եղել, հայ քրիստոնյա էլ կմանք։ Խորհուրդներիդ համար շատ շնորհակալ եմ, հավանաբար իմ ճակատին էլ այդ էր գրված, թող տանջվելով էլ մեռնեմ։

Անա բաջին նոր էր հեռացել մեր տնից, երբ մի թուրք պաշտոնյա՝ դավթարը թելի տակ, ներս մտավ մեր տուն։ Դավթարը բացեց, կարդաց մորս եւ մեր աւուսները, ապա ասաց.

- Վաղն առավոտյան Հուքմաթի բակում բոլոր հայ ընտանիքների ժողով կա, ոչ մեկը չբացակայեք, հակառակ դեպքում ձեզ կտանենք ծեծելով, հասկացա՞ք։

Սպառնալից տոնով ասաց պաշտոնյան եւ արագ դուրս եկավ։

Շարունակելի

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 1.8.2016 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ